# ՀԱՂՈՐԴՈՒՄ

## Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 2025 թվականի գործունեության մասին

*(«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն)*

*ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) 2025 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության և օրենսդրական այլ ակտերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում զգալի աշխատանքներ է կատարել հաշվետու և նախորդ տարիներին կատարված հանցագործությունների բացահայտման, մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու, հետախուզվող անձանց հայտնաբերման, հանցագործության հետևանքով պատճառված գույքային վնասի վերականգնման, մինչդատական վարույթի մասնակիցների իրավունքների, օրինականության ապահովման ուղղությամբ:*

*Պարզվել են առանձին հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքները և դրանք վերացնելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով տարբեր պաշտոնատար և իրավաբանական անձանց ներկայացվել միջնորդագրեր:*

*Համապատասխան ոլորտներում աշխատանքների կազմակերպման և կազմակերպչական բնույթի մի շարք խնդիրների լուծման, պատշաճ նախաքննություն իրականացնելու և արդյունավետության բարձրացման, քննիչների մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային կարողությունների կատարելագործման, քրեական վարույթները ողջամիտ ժամկետում ավարտելու նկատառումներից ելնելով՝ տրվել են 125 հրամաններ և հանձնարարականներ, որոնցից հատկանշական են՝ «Քրեական վարույթներով կատարած աշխատանքների վերաբերյալ շաբաթական հաշվետվություն ներկայացնելու մասին» թիվ 106-Ա, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում քրեական վարույթների ցուցակագրման, հանձնում-ընդունում կատարելու մասին» թիվ 115-Ա, «Մինչդատական վարույթի մասնավոր մասնակիցներին, նախքան վարույթի ավարտը, քրեական վարույթի նյութերի պատճեններ տրամադրելու դեպքում քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ» թիվ 116-Ա, «Օրենքի հետ առնչվող երեխաների մասնակցությամբ ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարման առանձնահատկությունների մասին» թիվ 136-Ա հանձնարարականները:*

*Զգալի աշխատանքներ են կատարվել ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածուների ցուցակի համալրման համար. անցկացվել է 5 քննություն, որոնց մասնակցելու դիմում է ներկայացրել 496 անձ, պաշտոնի է նշանակվել 137 անձ:*

Նշանակումներ են կատարվել նաև բարձրագույն և գլխավոր պաշտոններում. բարձրագույն պաշտոններում՝ 18, գլխավոր պաշտոններում՝ 64:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի ստորաբաժանումների կողմից ընդունվել է 74.893 հաղորդում, որից 57.672-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 17.221-ով՝ չի նախաձեռնվել:

Եվս 649 քրեական վարույթ նախաձեռնվել է այլ քրեական վարույթների նախաքննության շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում քննվել է 224.444 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 207.132-ի դիմաց, այսինքն՝ քրեական վարույթների թիվն աճել է 17.312-ով կամ 8.3%-ով:

Նշված 224.444 քրեական վարույթից 157.367-ը փոխանցվել է 2024 թվականից: Կոմիտեի մարմինների, ստորաբաժանումների կողմից նախաձեռնվել է 58.321 քրեական վարույթ (2024թ.՝ 58.609), 1.891-ով մաս է անջատվել (2024թ.՝ 1.757), 5.688 քրեական վարույթ ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից և այլ պետություններից) (2024թ.՝ 5.834), 3-ով նախաձեռնվել է բժշկական հարկադրանքի վարույթ (2024թ.՝ 18), 312 քրեական վարույթով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը և վերադարձվել է նախաքննության (2024թ.՝ 220), 862 քրեական վարույթով չի հաստատվել կարճելու մասին որոշումը և վերադարձվել է նախաքննության (2024թ.՝ 693):

Վարույթի աճին զուգընթաց՝ աճել է նաև քննիչների միջին ծանրաբեռնվածությունը. 2025 թվականի ընթացքում մեկ քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 350 քրեական վարույթ՝ 2024 թվականի 319-ի դիմաց, այսինքն՝ աճել է 31-ով կամ 9.7%-ով:

224.444 քրեական վարույթից 128.279-ը նախորդ տարիներին ապացուցողական և վարութային գործողություններն ավարտված վարույթներ են (այսուհետ՝ հաշվառված):

***Առանց նախորդ տարիներին հաշվառված 128.279 և Կոմիտեի ստորաբաժանումների միջև ուղարկված 5.234 քրեական վարույթների, 2025 թվականի ընթացքում քննվել է 90.931 քրեական վարույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 85.341-ի դիմաց, այսինքն՝ աճել է 5.590 վարույթով կամ 6.5%-ով:***



*2025 թվականի ընթացքում քննված 90.931 քրեական վարույթից 41.761-ն ավարտվել է, 260-ն ուղարկվել է այլ նախաքննական մարմին, 7.221-ը՝ միացվել է, 20.450-ը հաշվառվել է, 2-ով վերացվել է մաս անջատելու որոշումը, իսկ 21.237 քրեական վարույթ փոխանցվել է՝ նախորդ տարվա 22.130-ի դիմաց, այսինքն՝ մնացորդ քրեական վարույթները նվազել են 893-ով կամ 4%-ով: Փոխանցված քրեական վարույթներից 989-ով հարուցված է քրեական հետապնդում (ներգրավված են մեղադրյալներ), որից 159-ը ոչ մեծ, 308-ը՝ միջին ծանրության, 388-ը՝ ծանր և 134-ը՝ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ են:*




*Այսպիսով, 90.931 վարույթից լուծվել է 69.694-ի ընթացքը՝ նախորդ տարվա 63.211-ի դիմաց, այսինքն՝ ընթացքը լուծված քրեական վարույթներն աճել են 6.483-ով կամ 10.2%-ով:*

*Արդյունավետությունը կազմել է 76.6%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 74.1%-ի դիմաց՝ աճել է 2.5%-ով:Մեկ քննիչի միջին ծանրաբեռնվածությունը (90.931-ի վարույթի հաշվառմամբ) կազմել է 142 քրեական վարույթ, նախորդ տարվա 132-ի դիմաց՝ աճել է 10-ով կամ 7.5%-ով:*

*Ինչպես նշվեց, 2025 թվականի ընթացքում ավարտվել է 41.761 քրեական վարույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 37.947 վարույթի դիմաց, այսինքն՝ աճել է 3.814 քրեական վարույթով կամ 10%-ով:*

*Ավարտված 41.761 քրեական վարույթից 14.650-ը մեղադրական եզրակացությամբ 15.533 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 11.825 քրեական վարույթ՝ 12.805 անձի վերաբերյալ): Նախորդ տարվա համեմատությամբ դատարան ուղարկված վարույթների քանակն աճել է 2.825-ով կամ 23.8%-ով, իսկ անձանց քանակը՝ 2.728-ով կամ 21.3%-ով: Բացի այդ, բժշկական հարկադրանքի 61*

*վարույթով կազմվել է եզրափակիչ ակտ և ուղարկվել դատարան (2024թ.՝ 45, աճել է 16-ով կամ 35.5%-ով):*

*27.050 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 26.077, աճել է 973-ով կամ 3.7%-ով): Ընդ որում, նշված վարույթներից 22.467-ը կարճվել է ռեաբիլիտացնող (2024թ.՝ 20.866, աճել է 1.601-ով կամ 7.6%-ով), 4.583-ը՝ ոչ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 5.211, նվազել է 628-ով կամ 12%-ով) հիմքերով:*




*Այս առումով Կոմիտեի արտադրողականությունն ըստ ընթացքը լուծված վարույթների՝ ունի հետևյալ պատկերը.*

| ԵՔՔՎ – 76.6% (+4.8) | |
|---|---|
| Ջվարթնոց | 94.7% (+1.8) |
| Մալաթիա | 83.7% (+3.5) |
| ՃՏՀ | 81.6% (+0.8) |
| Կենտրոն-3-րդ | 79.1% (+9.5) |
| Էրեբունի | 78.5% (+10) |
| Կենտրոն 1-ին | 78.3% (+15.7) |
| Կենտրոն-2-րդ | 76.9% (+8.5) |
| Աջափնյակ | 76% (+12.8) |
| Քանաքեռ-Զեյթուն | 73.5% (-13.1) |
| Արաբկիր | 71.8% (-2.4) |
| Շենգավիթ | 69.5% (+8.9) |
| Նոր Նորք | 69.4% (+7.4) |
| ԾՀՔԲ | 65.8% (-8) |

| ՄՔՎ-ներ-79.6% (-1.3) | |
|---|---|
| Լոռի | 88.4% (+2.6) |
| Գեղարքունիք | 82.6% (+3.3) |
| Արարատ | 82% (-3.3) |
| Տավուշ | 80.7% (+0.8) |
| Արմավիր | 79.5% (-7.5) |
| Կոտայք | 78.2% (-4) |
| Վայոց Ձոր | 77.6% (-2.9) |
| Սյունիք | 76.1% (+2.4) |
| Շիրակ | 74% (+3.8) |
| Արագածոտն | 71.4% (-8.7) |

| ԶՔԳՎ ԿՔԲ-ներ-84.8%(+5.3) | |
|---|---|
| 6-րդ ԿՔԲ | 89.8% (+5.2) |
| 4-րդ ԿՔԲ | 86.3%(+3,5) |
| 3-րդ ԿՔԲ | 85.4% (+11.2) |
| Վերահսկ.վարչ. | 85.4% (-2.6) |
| 9-րդ ԿՔԲ | 83.6% (+8.7) |
| 5-րդ ԿՔԲ | 82.9% (+5.1) |
| 7-րդ ԿՔԲ | 82.6% (+2.1) |
| 10-րդ ԿՔԲ | 78.5% (+9.4) |
| ԶՔԳՎ ՀԿԳ ՔՎ | 72.1% (+9.3) |
| 8-րդ ԿՔԲ | 65.4% (-13.5) |

Կոմիտեի արտադրողականությունն ըստ դատավարական ավարտի՝ ունի հետևյալ պատկերը՝

| ԵՔՔՎ - 34.1% (+5.6) | |
|---|---|
| Ավանի-Նորք | 63.3% (+0.9) |
| ԾՏՀ | 61.7% (+15.6) |
| Էրեբունի | 37.6% (+12.9) |
| Աջափնյակ | 31.8% (+8.6) |
| Քանաքեռ-Զեյթուն | 29.3% (-0.8) |
| Մալաթիա | 27.7% (-0.8) |
| Կենտրոն 1-ին | 27.4% (+10.1) |
| Կենտրոն-3-րդ | 26.6% (+4.1) |
| Նոր Նորք | 26.4% (+0.1) |
| Շենգավիթ | 24.8% (+3.6) |
| Կենտրոն-2-րդ | 20.8% (+2) |
| ԾՀՔԲ | 20.1% (+2.4) |
| Արաբկիր | 19.5% (-3.1) |

| Մ ՔՎ-ներ-56.1% (-1.2) | |
|---|---|
| Գեղարքունիք | 63% (-0.6) |
| Վայոց Ձոր | 62.6% (+3) |
| Արարատ | 61.5% (-5.3) |
| Լոռի | 58.7% (+3.9) |
| Սյունիք | 57% (-0.4) |
| Արմավիր | 56.6% (-2.6) |
| Կոտայք | 52.4% (-2.5) |
| Տավուշ | 51.4% (+0.7) |
| Արագածոտն | 48% (-13.5) |
| Շիրակ | 50.4% (+4.9) |

| ԶՔԳՎ ԿՔԲ-ներ-44.6%(-4.4) | |
|---|---|
| 6-րդ ԿՔԲ | 72.8% (+14.1) |
| 5-րդ ԿՔԲ | 62.8% (+9.3) |
| 3-րդ ԿՔԲ | 62.2% (+11.5) |
| 9-րդ ԿՔԲ | 60.1% (+13.1) |
| Վերահսկ. Վարչ. | 58.5% (+26.5) |
| 7-րդ ԿՔԲ | 56.2% (+5.5) |
| 10-րդ ԿՔԲ | 51.5% (+9) |
| 8-րդ ԿՔԲ | 51.4% (+8.4) |
| 4-րդ ԿՔԲ | 47.7% (-0.6) |
| ԶՔԳՎ ՀԿԳ ՔՎ | 36.8% (+11.7) |

***Մեղադրական եզրակացությունը, եզրափակիչ ակտը և կարճելու մասին որոշումը չհաստատված և նախաքննության վերադարձված վարույթներ.***

*2025 թվականի ընթացքում 312 քրեական վարույթով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը կամ եզրափակիչ ակտը և վերադարձվել է նախաքննության (2024թ.՝ 220, աճել է 92-ով կամ 41.8%-ով), որը կազմում է դատարան ուղարկված 14.711 քրեական վարույթների (այդ թվում՝ բժշկական հարկադրանքի վարույթների) 2.1%-ը:*

*169-ով կամ 24.3%-ով աճել են հսկող դատախազների կողմից քրեական վարույթը կարճելու մասին կայացված որոշումները չհաստատելու և նախաքննության վերադարձնելու դեպքերը. 2025 թվականի ընթացքում չի հաստատվել 862 որոշում (2024թ.՝ 693):*

*Տարբեր տարիների ընթացքում դատարան ուղարկված քրեական վարույթներով (ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների) 2025 թվականի ընթացքում դատարանների կողմից կայացվել է 10.074 եզրափակիչ դատական ակտ, որից 284-ը արդարացման դատավճիռներ՝ 361 անձանց վերաբերյալ (2.81%):*

***Դատախազների կողմից տրված գրավոր հանձնարարություններ.***

*2025 թվականի ընթացքում նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից քննիչներին տրվել է 3.851 գրավոր*

*հանձնարարություն, որից 123-ով առարկություն է բերվել, սակայն 121-ը մերժվել է, իսկ 2-ի վերաբերյալ 2025 թվականի հունվարի 31-ի դրությամբ որոշում չի կայացվել:*

***Ձերբակալում, կալանք, այլ խափանման միջոցներ, քրեական հետապնդումներ, խուզարկություններ.***

*Ձերբակալվել է 7.457 անձ (6.478-ը՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, 960-ը՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար, 19-ը՝ խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ), նախորդ տարվա 7.286-ի դիմաց, այսինքն՝ աճել է 171-ով կամ 2.3%-ով: 5.509-ն ազատվել է արգելանքից (2024թ.՝ 5.430, աճել է 79-ով կամ 1,4%-ով):*

*Ներկայացվել է խափանման միջոցը կալանք կիրառելու վերաբերյալ 3.063 միջնորդություն (2024թ.՝ 3.095, նվազել է 32-ով կամ 1%-ով), որից 2.181-ը բավարարվել է ամբողջությամբ (2024թ.՝ 2.433, նվազել է 252-ով կամ 10.3%-ով), 578-ը՝ մասնակի (2024թ.՝ 392, աճել է 186-ով կամ 47.4%-ով), 304-ը մերժվել է (2024թ.՝ 270, աճել է 34-ով կամ 12.5%-ով): Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ 2025թ. քրեական հետապնդում է հարուցվել 16.294 անձանց նկատմամբ, իսկ 2024թ.՝ 13.262, այսինքն 3.032-ով կամ 22.8%-ով ավել: 2025 թվականի ընթացքում խափանման միջոց կալանքը կիրառվել է մեղադրյալների 18.7%-ի, իսկ 2024 թվականին՝ 23.3%-ի նկատմամբ, այսինքն՝ խափանման միջոց կիրառելու դեպքերը նվազել են 4.6%-ով:*

*Կալանքի միջնորդություններից 747-ը եղել է ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ (Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) և 462-րդ (Վարժական հավաքից խուսափելը) հոդվածներով քրեական հետապնդման ենթարկված մեղադրյալների վերաբերյալ (2024թ.՝ 961, նվազել է 214-ով կամ 22.2%-ով): Դրանցից 717-ը բավարարվել է ամբողջությամբ (2024թ.՝ 936, նվազել է 219-ով կամ 23.3%-ով), 4-ը՝ մասնակի (2024թ.՝ 0), 26-ը մերժվել է (2024թ.՝ 25, աճել է 1-ով կամ 4%-ով):*

*Խափանման միջոց կալանքը փոխվել կամ վերացվել է 716 անձի նկատմամբ (այդ թվում նաև փաստացի կալանքի տակ չգտնվողների) (2024թ.՝ 607, աճել է 109-ով կամ 17.9%-ով), որից 638-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ և 462-րդ հոդվածներով քրեական հետապնդման ենթարկված մեղադրյալների վերաբերյալ (2024թ.՝ 432, աճել է 206-ով կամ 47.6%-ով):*

*Ներկայացվել է կալանքի ժամկետը երկարաձգելու մասին 1.615 միջնորդություն (2024թ.՝ 1.482, աճել է 133-ով կամ 8.9%-ով), որից 1.290-ը բավարարվել է ամբողջությամբ (2024թ.՝ 1.218, աճել է 72-ով կամ 5.9%-ով), 254-ը՝ մասնակի (2024թ.՝ 169, աճել է 85-ով կամ 50.2%-ով), 71-ը մերժվել է (2024թ.՝ 95, նվազել է 24-ով կամ 25.2%-ով):*

*Ներկայացվել է խափանման միջոցը տնային կալանք կիրառելու մասին 133 միջնորդություն (2024թ.՝ 208, նվազել է 75-ով կամ 36%-ով), որից 104-ը բավարարվել է (2024թ.՝ 184, նվազել է 80-ով կամ 43.4%-ով), իսկ 29-ը՝ մերժվել (2024թ.՝ 24, աճել է 5-ով կամ 20.8%-ով): Բացի այդ, 415 անձի նկատմամբ տնային կալանք կիրառվել է դատարանի կողմից՝ խափանման միջոցը կալանքը կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունները մասնակի բավարարելու արդյունքում (2024թ.՝ 392, աճել է 23-ով կամ 5.8%-ով):*

*Ներկայացվել է խափանման միջոց վարչական հսկողություն կիրառելու մասին 44 միջնորդություն (2024թ.՝ 42, աճել է 2-ով կամ 4.7%-ով), որից 34-ը բավարարվել է (2024թ.՝ 39, նվազել է 5-ով կամ 12.8%-ով), իսկ 10-ը՝ մերժվել (2024թ.՝ 3, աճել է 7-ով կամ 233%-ով): Բացի այդ, 205 անձի նկատմամբ վարչական հսկողություն կիրառվել է դատարանի կողմից՝ խափանման միջոց կալանքը, տնային կալանքը կիրառելու կամ ժամկետը երկարաձգելու միջնորդությունները մերժելու կամ մասնակի մերժելու արդյունքում (2024թ.՝ 133, աճել է 72-ով կամ 54.1%-ով):*

*27 դեպքում կիրառվել է պաշտոնավարման կասեցում (2024թ.՝ 39, նվազել է 12-ով կամ 30.7%-ով):*

*300 դեպքում որպես խափանման միջոց է կիրառվել գրավը (2024թ.՝ 211, աճել է 89-ով կամ 42,1%-ով):*

*Ներկայացվել է քրեական հետապնդում հարուցելու 13.814 միջնորդություն (2024թ.՝ 11.736, աճել է 2.078-ով կամ 17.7%-ով), որից 13.530-ը բավարարվել է (2024թ.՝ 11.462, աճել է 2.068-ով կամ 18%-ով), իսկ 284-ը՝ մերժվել (2024թ.՝ 274, աճել է 10-ով կամ 3.6%-ով):*

*Ներկայացվել է քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին 15.489 միջնորդություն (2024թ.՝ 17.802, նվազել է 2.313-ով կամ 12.9%-ով), որից 14.864-ը բավարարվել է (2024թ.՝ 17.116, նվազել է 2.252-ով կամ 13.1%-ով), 471-ը՝ մերժվել (2024թ.՝ 613, նվազել է 142-ով կամ 23.1%-ով), իսկ 154-ով 2025 թվականի հունվարի 31-ի դրությամբ որոշում չի կայացվել:*

*Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին 3.504 միջնորդություններից (2024թ.՝ 3.579, նվազել է 75-ով կամ 2%-ով) բավարարվել է 3.482-ը (2024թ.՝ 3.551, նվազել է 69-ով կամ 1.9%-ով), իսկ 22-ը՝ մերժվել (2024թ.՝ 28, նվազել է 6-ով կամ 21.4%-ով):*

*Կայացվել է քննիչին վարույթից հեռացնելու 290 որոշում (2024թ.՝ 201, աճել է 89-ով կամ 44.2%-ով), 199-ով առարկություն է բերվել, որից 4-ը բավարարվել է, 195-ը՝ մերժվել:*

***Հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները** վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու նպատակով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով քննիչների կողմից ներկայացվել է 744 միջնորդագիր, և 36-ը ներկայացվել է դատախազների կողմից (ընդհանուր՝ 780):*

*Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթներով խնամակալության և հոգաբարձության մարմիններին, ուսումնական հաստատություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումներին ուղարկվել է 62 միջնորդագիր:*

*Մարդու դեմ ուղղված, հրազենի գործադրմամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթների վիճակագրության ուսումնասիրության արդյունքներով միջնորդագիր է ներկայացվել ՀՀ ՆԳ նախարարին՝ զենքի շրջանառության օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու, զենքի ապօրինի շրջանառության դեպքերը, դրա գործադրմամբ հնարավոր նախապատրաստվող հանցագործությունները նախականխելու, կանխելու, ինչպես նաև՝ զենքի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ քննվող քրեական վարույթներով հանցագործության գործիք հանդիսացած զենքերը հայտնաբերելու, դրանց ձեռք բերման աղբյուրները բացահայտելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:*

*Պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների ինքնակամ զավթումների, ապօրինի հատումների, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու կամ հիշյալ տարածքներում օրենսդրությամբ արգելված այլ իրավախախտումները կանխելու նպատակով միջնորդագրեր են ներկայացվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարին:*

*Երկաթուղային գծերի և ավտոմոբիլային ճանապարհների հատման վայրերում գնացքների և ավտոմեքենաների բախման, ինչպես նաև գնացքների մեքենավարների կողմից երկաթուղային գծերի վրա հայտնված հետիոտներին վրաերթի ենթարկելու դեպքերը կանխելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացվել է միջնորդագիր՝ համապատասխան տարածքները զգուշացնող նշաններով համալրելու, երկաթուղային գծերի վրա կառուցված ժամանակավոր ճանապարհներն ապամոնտաժելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:*

*Համակարգչային հափշտակությունների կանխման նպատակով (ՀՀ-ում գործող տարբեր առևտրային բանկերի կողմից սպասարկվող բանկային առցանց հավելվածների օգտագործմամբ բանկերի հաճախորդների անվամբ առցանց եղանակով վարկային պայմանագրեր ձևակերպելու, այդ պայմանագրերով բանկերի հաճախորդների անվամբ ձևավորված վարկային միջոցները, ինչպես նաև հաճախորդների բանկային հաշիվներին առկա գումարները հափշտակելու դեպքերով) միջնորդագրեր են ուղարկվել ՀՀ Կենտրոնական բանկ, ինչպես նաև «ԱյԴի Բանկ», «Ինեկոբանկ», ՓԲ ընկերություններ:*

Դաշտոնատար անձանց կողմից իշխանական, ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու, լիազորություններն անցնելու դեպքերով միջնորդագրեր են ներկայացվել ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության ու ոստիկանության պարեկային ծառայության պետերին:

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման կապակցությամբ միջնորդագիր է ուղարկվել ՀՀ Արարատի մարզպետին:

ՀՀ ԱԳՆ գլխավոր քարտուղարին միջնորդագիր է ներկայացվել նախարարության աշխատակցի կողմից պետական և ծառայողական գաղտնիք չպարունակող փաստաթղթերի հետ վարվելու կարգին ծանոթացած չլինելու վերաբերյալ:

«Արսենալ ԼՏԴ» ՍՊԸ տարածքում անվտանգության կանոնների խախտումները կանխելու նպատակով միջնորդագիր է ներկայացվել ՀՀ ԲՏԱ նախարարության գլխավոր քարտուղարին:

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին միջնորդագիր է ներկայացվել՝ «Ավան» հոգեկան առողջության կենտրոնի տարբեր բուժառուների կողմից հանցագործություններ, ինքնավնասումներ կատարելու, ինչպես նաև դժբախտ պատահարների վերաբերյալ՝ կապված բուժանձնակազմի վերահսկողական և մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետ:

Երևան քաղաքի տարբեր փողոցներում մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարները կանխելու և ճանապարհային երթևեկությունը կարգավորող համապատասխան նշաններ տեղադրելու նպատակով միջնորդագրեր են ներկայացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից ինքնակամ կառույցների շինարարությունը չկանխելու կապակցությամբ միջնորդագիր է ներկայացվել Երևանի քաղաքապետին:

Բազմաթիվ միջնորդագրեր են ներկայացվել ՀՀ ՊՆ տարբեր զորամասերի հրամանատարներին՝ զինծառայողների մոտ ՀՀ ԶՈՒ կանոնադրություններով սահմանված կանոնագրքային փոխհարաբերությունների փոխարեն արմատավորված՝ զինծառայողներին անվայել պահվածքը, մտածելակերպը և «փողոցային բարքերը», սեփական եսը վերադասելու և թվացյալ առավելությունները ցուցադրելու սովորույթները կանխելու նպատակով:

Միաժամանակ առաջարկվել է զինծառայողների հետ պարբերաբար անցկացնել բարոյահոգեբանական թեմաներով առանձնազրույցներ՝ հնարավոր իրավախախտում-

ները ժամանակին բացահայտելու, դրանց առաջացման պատճառներն ու նպաստող պայմանները պարզելու և վերացնելու նպատակով:

Միջնորդագրեր են ներկայացվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ վարժական հավաքների կազմակերպման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքների պահանջներից բխող իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարելու կամ անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Միջնորդագրեր են ներկայացվել ՀՀ ՊՆ տարբեր զորամասերի հրամանատարական կազմին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածով՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով՝ նմանատիպ դեպքերը կանխելու նպատակով:

Մասնավորապես, այդ քրեական վարույթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ տուժողները մի շարք դեպքերում կենցաղային, մյուս դեպքերում՝ մարտական հերթապահություն կրելու կանոնների խախտումների հարցերով խոսակցության կամ վիճաբանության մեջ են հայտնվել համածառայակիցների հետ: Հաջորդող ժամանակահատվածում համածառայակիցները տուժողների նկատմամբ դրսևորել են անթույլատրելի վարքագիծ՝ զինծառայողների շրջանում նրանց մասին տարածելով արատավոր և նվաստացնող տեղեկություններ, որը հանգեցրել է շարունակական կոնֆլիկտների, ինչպես նաև ֆիզիկական և հոգեբանական ճնշման դրսևորումների: Վերոնշյալ գործողությունների արդյունքում տուժողները հայտնվել են սոցիալ-հոգեբանական ծանր վիճակում և այլ ելք չտեսնելով՝ դիմել ինքնասպանության:

Հաշվի առնելով, որ զինվորական ծառայություն կրելու վայրերում հրամանատարական կազմը՝ զինվորական պաշտոնատար անձինք, պատասխանատու են զինվորական կարգապահության և ներքին կարգականոնի պահպանման, սոցիալական արդարության և զինծառայողների միջև փոխադարձ վստահության և հանդուրժողականության համար, և որ նշված դեպքերը մեծամասամբ տեղի են ունեցել կոլեկտիվում հիշյալ հանգամանքների բացակայության պայմաններում, ուստի քրեական վարույթներով պարտադիր քննության առարկա են դարձվել նաև հրամանատարական կազմի գործողությունները: Մի շարք դեպքերով պարզվել է, որ հրամանատարներն իրենց ենթակա ստորաբաժանումներում իրականացվել է թույլ կամ ձևական վերահսկողություն: Մեկ այլ պարագայում դեպքին նախորդող ժամանակահատվածում տեղյակ լինելով զինծառայողների միջանձնային խնդիրների մասին՝ դրսևորել են հանցավոր անգործություն՝ չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել իրենց ծառայողական պարտականությունները՝ որևէ միջոց չեն ձեռնարկել խնդիրները հարթելու, կասեցնելու ուղղությամբ, սահմանված կարգով վերադաս հրամանատարությանը չեն զեկուցել քրոնեն պատժելի՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտման վերաբերյալ, որի

*հետևանքով իրավապահ մարմինների տեսադաշտից դուրս են մնացել նման հանցավոր արարքներն ու այն կատարող անիք, արդյունքում ստորաբաժանումներում կամ զորամասերում ստեղծվել է անպատժելիության մթնոլորտ, որը կուժողի մոտ առաջացրել է անելանելի վիճակ և հանգեցրել ինքնասպանության:*

*ՀՀ ՊՆ զորամասերի հրամանատարական կազմին առաջարկվել է գործուն միջոցներ ձեռնարկել զինծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունները ՀՀ ԶՈՒ կանոնադրությունների, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կատարելու ուղղությամբ և ենթակա զինծառայողների հետ պարբերաբար անցկացնել բարոյահոգեբանական թեմաներով առանձնազրույցներ:*

*Ներկայացվել է խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ 11.793 միջնորդություն (2024թ.՝ 8.694, աճել է 3.099-ով կամ 35.6%-ով), որից 10.435-ը բավարարվել է (2024թ.՝ 7.865, աճել է 2.570-ով կամ 32.6%-ով), իսկ 1.358-ը՝ մերժվել (2024թ.՝ 829, աճել է 529-ով կամ 63.8%-ով):*

*Միջնորդություններից 7.557-ը եղել է բնակարանի խուզարկության թույլտվություն ստանալու վերաբերյալ (2024թ.՝ 5.995, աճել է 1.562-ով կամ 26%-ով), որից 6.620-ը բավարարվել է (2024թ.՝ 5.446, աճել է 1.174-ով կամ 21.5%-ով), իսկ 937-ը՝ մերժվել (2024թ.՝ 549, աճել է 388-ով կամ 70.6%-ով):*

*Միջնորդություններից 4.236-ը եղել է թվային խուզարկությունների վերաբերյալ (2024թ.՝ 2.699, աճել է 1.537-ով կամ 56.9%-ով), որից 3.815-ը բավարարվել է (2024թ.՝ 2.419, աճել է 1.396-ով կամ 57.7%-ով), իսկ 421-ը՝ մերժվել (2024թ.՝ 280, աճել է 141-ով կամ 50.3%-ով):*

***Հանցագործությամբ պատճառված գույքային վնաս և վերականգնում.***

*2025 թվականի ընթացքում նախաքննություն **ավարտված** քրեական վարույթներով պատճառված վնասը կազմել է ընդհանուր 34.034.339.000 ՀՀ դրամ, որից նախաքննության փուլում վերականգնվել է **12.602.960.000** ՀՀ դրամը կամ 37%-ը: Արգելանք է դրվել 1.294.194.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույքի և 10.863.104.000 ՀՀ դրամի վրա:*

*Այսպես.*

*Պետությանը պատճառված 28.678.174.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 10.646.435.000 ՀՀ դրամը կամ 37.1%-ը: Արգելանք է դրվել 1.100.522.000 ՀՀ դրամ արժողության գույքի և 10.859.945.000 ՀՀ դրամի վրա:*

*Համայնքներին պատճառված 1.734.193.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 873.912.000 ՀՀ դրամը կամ 50.3%-ը: Արգելանք է դրվել 156.850.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

Իրավաբանական անձանց պատճառված 532.291.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 79.231.000 ՀՀ դրամը կամ 14.8%-ը: Արգելադրված գույք առկա չէ, սակայն արգելանք է դրվել 3.159.000 ՀՀ դրամի վրա:

Միջազգային կազմակերպություններին գույքային վնաս չի պատճառվել:

Ֆիզիկական անձանց պատճառված 3.089.681.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 1.003.382.000 ՀՀ դրամը կամ 32.4%-ը: Արգելանք է դրվել 36.822.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:




Կոմիտեի կողմից 2025 թվականի ընթացքում կատարած աշխատանքներն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով հարկ է նշել նաև, որ բացի **ավարտված** քրեական վարույթներով արձանագրված 12.602.960.000 ՀՀ դրամ գույքային վնասի վերականգնումից, 31.12.2025 թվականի դրությամբ **անավարտ** քրեական վարույթներով վերականգնվել է ևս 34.526.592.000 ՀՀ դրամ՝ առանց ավտոներկրման վարույթներով ԱԱՀ դեբետից մարված 6.217.194.000 ՀՀ դրամ պարտավորությունների հաշվառման, որից պետությանը՝ 34.403.814.000 ՀՀ դրամ, համայնքներին՝ 9.471.000 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց՝ 16.867.000 ՀՀ դրամ և ֆիզիկական անձանց՝ 96.440.000 ՀՀ դրամ:

Այսպիսով, 2025 թվականի ընթացքում **ավարտված և անավարտ** վարույթներով պատճառված գույքային վնասից վերականգնվել է ընդհանուր **47.129.552.000** ՀՀ դրամը՝ առանց ավտոներկրման վարույթներով ԱԱՀ դեբետից մարված **6.217.194.000** ՀՀ դրամ պարտավորությունների հաշվառման:

Բացի այդ, արգելանք է դրվել 1.294.194.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույքի և 11.696.013.000 դրամական միջոցների վրա, ընդհանուրը՝ **12.990.207.000**

դրամի չափով: Նշված 11.696.013.000 ՀՀ դրամից 10.863.104.000 ՀՀ դրամն արգելադրվել է ավարտված վարույթներով և 10.296.542.000 ՀՀ դրամը գտնվում է բանկում, 566.562.000 ՀՀ դրամը՝ դատախազության դեպոզիտում: 832.909.000 ՀՀ դրամն արգելադրվել է ընթացիկ վարույթներով և գտնվում է բանկում (2024 թվականի ընթացքում դրամական միջոցներ չեն արգելադրվել, արգելանք է դրվել 2.383.456.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքի վրա):




***Զինված ուժերում մահվան դեպքեր.***

*2025 թվականի ընթացքում զինծառայողների կամ նրանց մասնակցությամբ կատարված, ինչպես նաև զորամասերի տարածքում տեղի ունեցած մահվան 26 դեպքով ՋՔԳՎ ստորաբաժանումներում նախաձեռնվել է 26 քրեական վարույթ՝ 27 անձի կամ զինծառայողի վերաբերյալ (որից 16-ը՝ զինծառայող, 2-ը՝ աշխարհազորային, 8-ը՝ քաղաքացիական անձ, 1-ը՝ անհայտ անձ): 2024թվականի ընթացքում արձանագրվել է 35 դեպք՝ 40 մահացած (զոհված) անձի կամ զինծառայողի վերաբերյալ: Այսինքն՝ արձանագրված մահվան դեպքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 9-ով կամ 25,7%-ով, իսկ մահացած անձանց թիվը նվազել է 13-ով կամ 32,5%-ով:*

*Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է զինվորական ծառայության հետ կապված զինծառայողների մահվան 9 դեպք 9 զինծառայողի վերաբերյալ (3-ը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ զինծառայող), (2024 թվականի նույն ժամանակահատվածում 19 դեպք 24 մահացած անձ, որից 14-ը՝ 18 զինծառայողի մահվան դեպքեր են): Դեպքերը նվազել են 10-ով կամ 52,6%-ով, իսկ մահացած անձանց թիվը նվազել է 15-ով կամ 62,5%-ով:*

*Դրանցից 4-ը՝ ինքնասպանության հասցնելու կամ հակելու դեպքեր են, (2-ը՝ ՀՀ ԱՄԾ ՍՁ զինծառայող) (2024թ.՝ 7), 2-ը՝ դժբախտ պատահար (որոնցից 1-ը՝ հոսանքահարում, 1-ը՝ կայծակահարում) (2024թ.՝ 1), 2-ը՝ հիվանդության (1-ը՝ ՀՀ ԱՄԾ ՍՁ զինծառայող) (2024թ. ՝ 0), 1-ը՝ հանկարծամահության (2024թ. ՝ 0):*

***Ծառայության հետ կապված սպանության դեպքեր չեն արձանագրվել (2024թ՝ 5 դեպք, 5 անձ), հանցանակորդի կողմից կատարված սպանություններ նույնպես չեն արձանագրվել (2024թ.՝ 3 դեպք, 4 անձ), ինչպես նաև չեն արձանագրվել ծառայության հետ կապված տրանսպորտային կամ մարտական միջոցներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտման դեպքեր (2024թ.՝ 2 դեպք, 5 մահացած անձ) և ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոնների խախտման դեպքեր (2024թ.՝1 դեպք, 2 մահացած անձ):***

*2025 թվականի ընթացքում քննված մահվան մյուս 17 դեպքերը՝ 18 անձի վերաբերյալ, կապված չեն զինվորական ծառայության հետ, այդ թվում՝ 7-ը՝ զինծառայողի, 8-ը՝ քաղաքացիական անձանց, 2-ը՝ աշխարհազորայինների մահվան վերաբերյալ, իսկ 1-ով ինքնությունը չի պարզվել (2024թ.՝16 դեպք՝16 անձ, որից 5-ը՝ 5 զինծառայողի մահվան դեպքեր են):*

*Դրանցից 2-ը՝ 2 անձի վերաբերյալ, նախաձեռնվել են սպանության հատկանիշներով՝ (անհայտ մարդու ձեռքի թաթ հայտնաբերելու, մյուսը՝ պայմանագրային զինծառայողի՝ նախնական տվյալներով թմրամիջոց օգտագործելու արդյունքում մահանալու փաստերի առթիվ) (2024թ.՝ 0), 1-ը՝ 1 անձի ինքնասպանության հասցնելու կամ հակելու (2024թ.՝ 0), 8-ը՝ 9 անձի վերաբերյալ՝ տրանսպորտային միջոցներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտման (2024թ.՝ 5 դեպք, 5 անձ), 2-ը՝ 2 անձի վերաբերյալ՝ հիվանդության (2024թ.՝ 7 դեպք, 7 անձ), 2-ը՝ 2 անձի հանկարծամահության (2024թ.՝ 4 դեպք 4 անձ), 2-ը՝ 2 անձի վերաբերյալ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու և անզգուշությամբ տուժողի մահն առաջացնելու դեպքեր են (2024թ.՝ 0):*

***Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ.***

*2025 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվել է 643 քրեական վարույթ (2024թ.՝ 1.215), որից 363-ը փոխանցվել է 2024 թվականից (2023թ.-ից՝ 655), իսկ 280-ը վարույթ է ընդունվել 2025 թվականի ընթացքում (2024թ.՝ 560):*

*643 քրեական վարույթից 55-ն ավարտվել և մեղադրական եզրակացությամբ՝ 145 մեղադրյալի նկատմամբ ուղարկվել դատարան (2024թ.՝ 62 վարույթ՝ 134 անձ), 105-ը կարճվել է (2024թ.՝ 245), որից 63-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 189), իսկ 42-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 56), 193 քրեական վարույթ (2024թ.՝ 295) ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 53-ը՝ միացվել է (2024թ.՝ 147), 57-ը*

*հաշվառվել են որպես վարույթային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 55), 180 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 471):*

*Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով ավարտված քրեական վարույթներով պատճառված գույքային վնասը կազմել է **7.940.759.000** ՀՀ դրամ, որից մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է **895.115.000** ՀՀ դրամը կամ 11.2%-ը, արգելանք է դրվել **156.118.000** ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

*Այսպես՝*

***Պետությանը** պատճառված վնասը կազմել է 7.222.701.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 329.912.000 ՀՀ դրամը կամ 4.5%-ը, արգելանք է դրվել 968.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

***Համայնքներին** պատճառված վնասը կազմել է 700.037.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 565.124.000 ՀՀ դրամը կամ 80.7%-ը, արգելանք է դրվել 155.150.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

***Իրավաբանական անձանց** պատճառված վնասը կազմել է 18.021.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 79.000 ՀՀ դրամը կամ 0.4%-ը: Արգելադրված գույք առկա չէ:*

***Միջազգային կազմակերպություններին և ֆիզիկական անձանց** վնաս չի պատճառվել:*




***Անչափահասների կողմից կատարված հանցագործություններ.***

*2025 թվականի ընթացքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 464 քրեական վարույթ (2024թ.՝ 444), որից 158-ը*

փոխանցվել է 2024 թվականից (2023թ.-ից՝ 133), իսկ 306-ը վարույթ է ընդունվել 2025 թվականի ընթացքում (2024թ.՝ 311):

464 քրեական վարույթից 80-ն ավարտվել և մեղադրական եզրակացությամբ (2-ը՝ կրկնակի) 92 անչափահաս մեղադրյալի (2024թ.՝ 60 վարույթ՝ 78 անձ) նկատմամբ ուղարկվել է դատարան, 1-ն ավարտվել է եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան, 177-ը կարճվել է (2024թ.՝ 163), որից 119-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 67), իսկ 58-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 96), 5 քրեական վարույթ (2024թ.՝ 4) ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 35-ը՝ միացվել է (2024թ.՝ 27), 30-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 45), 136 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 145):

Դատարան ուղարկված 78 քրեական վարույթից (առանց կրկնակի) 5-ը քննվել է սպանության, 1-ը՝ սպանության նախապատրաստության, 2-ը՝ սպանության փորձի, 11-ը քննվել է առողջությանը ծանր վնաս պատճառելու, 4-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 7-ը՝ կողոպուտի, 1-ը՝ գողության, 2-ը՝ շորթման, 7-ը՝ խուլիգանության, 12-ը՝ զենքի, զինամթերքի օրինական շրջանառության դեմ ուղղված, 6-ը՝ թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված, 20-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

77 անչափահասի նկատմամբ (2024թ.՝ 127) որոշում է կայացվել ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին:

Քննված վարույթներով ձերբակալվել է 82 անչափահաս (2024թ.՝ 69), որից 52-ն ազատվել է արգելանքից (2024թ.՝ 58): 31 անչափահասի նկատմամբ (2024թ.՝ 11) խափանման միջոցը կալանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 14-ը բավարարվել է ամբողջությամբ (2024թ.՝ 5), 12-ը՝ մասնակի (2024թ.՝ 6), 5-ը մերժվել է:

Տնային կալանք կիրառելու 5 միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 4-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել (2024թ.՝ 1, որը բավարարվել է), իսկ 6 դեպքում (2024թ.՝ 2) դատարանի կողմից է կիրառվել տնային կալանք՝ խափանման միջոցը կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունները մասնակի բավարարելու արդյունքում:

2 դեպքում դատարանի կողմից է կիրառվել վարչական հսկողություն՝ խափանման միջոցը կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունները մասնակի բավարարելու արդյունքում (2024թ.՝ 0):

***Անչափահասների նկատմամբ կատարված հանցագործություններ.***

2025 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում քննվել է անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 1.529 քրեական վարույթ

*(2024թ.՝ 1.374), որից 483-ը փոխանցվել է 2024թ-ից (2023թ-ից՝ 418), իսկ 1.046-ը վարույթ է ընդունվել 2025 թվականի ընթացքում (2024թ.՝ 956):*

*1.529 քրեական վարույթից 135-ը (որից 3-ը՝ կրկնակի) մեղադրական եզրակացությամբ՝ 145 մեղադրյալի նկատմամբ, ուղարկվել է դատարան (2024թ.՝ 115 վարույթ՝ 128 անձ), 1-ն ավարտվել է եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան (2024թ.՝ 2): 670 (որից 7-ը՝ կրկնակի) քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 558), որից 572-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 479), իսկ 98-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 79), 72-ը՝ միացվել է (2024թ.՝ 59), 28 քրեական վարույթ (2024թ.՝ 20) ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 78-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 178), 545 չհաշվառված քրեական վարույթ փոխանցվել է 2026թ. (2025թ.՝ 442):*

*Դատարան ուղարկված 132 վարույթից (առանց կրկնակի) 4-ը քննվել է սպանության, 1-ը՝ ծննդկանի կողմից երեխայի սպանության, 7-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 2-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 3-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 5-ը՝ մարդուն առևանգելու, 2-ը՝ հոգեկան ներգործության, 23-ը՝ ֆիզիկական ներգործության, 35-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու, 1-ը՝ երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելու կամ ներգրավելու, 1-ը՝ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 2-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 8-ը՝ ալիմենտ վճարելուց խուսափելու, 32-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:*

*Դատարան ուղարկված 132 վարույթով 145 մեղադրյալից 49-ը հանդիսացել են անչափահաս տուժողի ընտանիքի անդամներ, 3-ը՝ խնամակալ/հոգաբարձու, 3-ը՝ ուսումնական կամ դաստիարակչական հաստատության աշխատակից, 90-ը՝ այլ անձինք:*

*Դատարան ուղարկված վարույթներով 157 տուժողից 49-ը եղել են մինչև 12, 47-ը՝ 13-14, 42-ը՝ 15-16, 19-ը՝ 17-18 տարեկան:*

*Կարճված 663 վարույթից (առանց կրկնակի) 4-ը քննվել է սպանության, 12-ը՝ ինքնասպանության հասցնելու, 10-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 24-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 18-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 7-ը՝ մարդուն առևանգելու, 16-ը՝ հոգեկան ներգործության, 117-ը՝ ֆիզիկական ներգործության, 45-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու, 2-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու,*

*64-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 8-ը՝ երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը 11-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, իսկ 324-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:*

*Կարճված վարույթներով 126 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չի հարուցվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը: 126 անձանցից 22-ը հանդիսացել են անչափահաս տուժողի ընտանիքի անդամներ, 1-ը՝ ուսումնական կամ դաստիարակչական հաստատության աշխատակից, 103-ը՝ այլ անձինք:*

*Կարճված վարույթներով 729 տուժողից 273-ը եղել են մինչև 12, 163-ը՝ 13-14, 187-ը՝ 15-16, 106-ը՝ 17-18 տարեկան:*

***Ընտանեկան բռնության վերաբերյալ հանցագործություններ.***

*2025 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ քննվել է 2.398 քրեական վարույթ (2024թ.՝ 2.207), որից 630-ը փոխանցվել է 2024թ-ից (2023թ.-ից՝ 659), իսկ 1.768-ը վարույթ է ընդունվել 2025 թվականի ընթացքում (2024թ.՝ 1.548):*

*380 քրեական վարույթ (այդ թվում՝ 5-ը կրկնակի) 388 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 405 վարույթ՝ 416 անձ), և 7 բժշկական հարկադրանքի վարույթ դատարան է ուղարկվել եզրափակիչ ակտով (2024թ.՝ 4), 972 քրեական վարույթ կարճվել է (որից 10-ը՝ կրկնակի) (2024թ.՝ 735), որից 887-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 663), իսկ 85-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 72), 284-ը՝ միացվել է (2024թ.՝ 235), 32 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 28) (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 93-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 232), 630 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 568):*

*Դատարան ուղարկված (առանց կրկնակի) 375 վարույթից 3-ը քննվել է սպանության, 1-ը՝ սպանության փորձի, 1-ը՝ ծննդկանի կողմից երեխայի սպանության, 4-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 10-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 39-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 1-ը՝ մարդուն առևանգելու, 4-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 20-ը՝ հոգեկան ներգործության, 211-ը՝ ֆիզիկական ներգործության, 10-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 1-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 8-ը՝ ալիմենտ վճարելուց խուսափելու, 8-ը՝*

անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու, 52-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված վարույթներով 388 մեղադրյալից 261-ը հանդիսացել է ամուսին, 34-ը՝ զուգընկեր, 46-ը՝ ծնող, պապ կամ պապ, 17-ը՝ քույր կամ եղբայր, 15-ը՝ զավակ կամ թոռ, 7-ը՝ ամուսնու քույր կամ ամուսնու եղբայր, 8-ը՝ փեսա կամ հարս:

Դատարան ուղարկված վարույթներով 417 տուժողից 25-ը եղել են մինչև 12, 16-ը՝ 13-14, 11-ը՝ 15-18 տարեկան, 365-ը՝ 18-ից բարձր տարիքի:

Կարճված (առանց կրկնակի) 962 վարույթներից 1-ը քննվել է սպանության փորձի, 12-ը՝ ինքնասպանության հասցնելու, 1-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 16-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 36-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 1-ը՝ մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելու, 1-ը՝ մարդու, երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգի կամ շահագործման, 6-ը՝ մարդուն առևանգելու, 5-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 140-ը՝ հոգեկան ներգործության, 554-ը՝ ֆիզիկական ներգործության, 6-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու, 3-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 28-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 4-ը՝ երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 12-ը՝ ալիմենտ վճարելուց խուսափելու, 11-ը՝ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու, 124-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Կարճված վարույթներով 104 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չի հարուցվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը: 104 անձից 80-ը հանդիսացել է ամուսին, 5-ը՝ զուգընկեր, 11-ը՝ ծնող, պապ կամ պապ, 5-ը՝ զավակ կամ թոռ, 3-ը՝ փեսա կամ հարս:

Կարճված վարույթներով 982 տուժողից 70-ը եղել են մինչև 12, 19-ը՝ 13-14, 42-ը՝ 15-18 տարեկան, 851-ը՝ 18-ից բարձր տարիքի:

***Այլ պետության քաղաքացիների կողմից կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործություններ.***

2025 թվականի ընթացքում այլ պետության քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ քննվել է 975 քրեական վարույթ, որից 216-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 140-ը՝ կարճվել, իսկ 252-ը փոխանցվել է 2026 թվական:

*Այլ պետության քաղաքացիների նկատմամբ կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ քննվել է 938 քրեական վարույթ, որից 39-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 201-ը կարճվել է, 270-ը փոխանցվել է 2026 թվական:*

***2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ ըստ ստորաբաժանումների և ըստ ոլորտների (միայն ակտիվ վարույթներով).***

***Կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում*** *(այսուհետ՝ Գլխավոր վարչություն) ընդունվել է 28 հաղորդում, որից 26-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 2-ով՝ չի նախաձեռնվել:*

*2025 թվականի ընթացքում Գլխավոր վարչության հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչության 4 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարույթում քննվել են միայն Կոմիտեի նախագահի կողմից հանձնարարված՝ հանրային հնչեղություն ունեցող, առանձնակի բարդություն ներկայացնող, մեծածավալ կամ բազմադրվագ քրեական վարույթներ: Հաշվետու ժամանակահատվածում քննվել է 88 քրեական վարույթ (2024թ.՝ 85-ի դիմաց), որից 24-ը փոխանցվել է 2024 թվականից:*

*7 քրեական վարույթ՝ 13 մեղադրյալի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 7 վարույթ՝ 20 անձ), 12 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 16), որից 8-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 14), իսկ 4-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 2), 29-ը՝ միացվել է (2024թ.՝ 18), 9 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 11), 6-ը հաշվառվել է որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 9), 25 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 24):*

*Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 71.6%, (2024թ.՝ 71.8%) ըստ դատավարական ավարտների՝ 21.6% (2024թ.՝ 27.1%) :*

*1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 13 վարույթ (2024թ.՝ 17):*

*Ավարտված քրեական վարույթներով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 2.123.403.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 106.867.000 ՀՀ դրամը արգելանք է դրվել 217.254.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա: Ավարտված քրեական վարույթներով համայնքներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպություններին վնաս չի պատճառվել:*

*Անավարտ քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը պատճառված 1.804.542.000 ՀՀ դրամ գումար, այսինքն՝ ավարտված և անավարտ քրեական վարույթներով վերականգնվել է ընդհանուրը 1.911.409.000 ՀՀ դրամ գումար:*

***Աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ.***

Գլխավոր վարչության միջոցով ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն՝ «Ֆինանսական հետախուզության տվյալների փոխանակման հարթակ» համակարգով կատարվել են 53 հարցումներ և պատասխանները տրամադրվել համապատասխան ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Գլխավոր վարչությունում ներդրված՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ ընկերության շտեմարաններին հասանելի կոնտակտային կետից 2025 թվականի ընթացքում ստացվել է 14 տեղեկատվական պահանջ, որոնք կատարվել և տրամադրվել են հասցեատերերին:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված հավելված 1 ձևաթղթին համապատասխան, 2025 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում քննված (Փողերի լվացման) դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթների վերաբերյալ հաշվետվություն է ուղարկվել ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն:

Ի կատարումն ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.12.2021թ. թիվ 167-Լ հրամանի՝ Գլխավոր վարչության կողմից կազմակերպվել է 2024 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տարվա ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության տարվա ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների տարվա ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա քննիչ», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում» և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն քննիչ» ճանաչելու վերաբերյալ հանձնաժողովի աշխատանքները, համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովին ներկայացվել են թեկնածու ստորաբաժանումներ:

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատակիցներից ձևավորված աշխատանքային խումբը, 2025 թվականի փետրվարի 3-28-ն ընկած ժամանակահատվածում, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներում կատարել է ուսումնասիրություններ՝ 2023 թվականի տարեկան վիճակագրական հաշվետվությամբ ներկայացված տվյալների և փաստացի ընթացք տրված քրեական վարույթների համապատասխանության հանգամանքը պարզելու համար, արձանագրված թերությունների մասին զեկուցագիր է ներկայացվել Կոմիտեի նախագահին:

Կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 28-ի թիվ 55-Ա հրամանով Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատակիցները, հանձնաժողովի կազմում՝ 2025 թվականի մարտի 3-ից մինչև 2025

*թվականի ապրիլի 16-ն ընկած ժամանակահատվածում, քրեական վարույթների գույքագրում են իրականացրել Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին, երկրորդ և երրորդ բաժիններում, որի կապակցությամբ զեկուցագիր է ներկայացվել Կոմիտեի նախագահին:*

*Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատակիցներից ձևավորված աշխատանքային խումբը՝ 2025 թվականի օգոստոսի 7-30-ն ընկած ժամանակահատվածում, ուսումնասիրություններ է իրականացրել Արագածոտնի մարզային քննչական վարչությունում, ցուցաբերել մեթոդական օգնություն, որի արդյունքում լուծվել է 167 քրեական վարույթի ընթացքը: Այդ կապակցությամբ համապատասխան զեկուցագիր է ներկայացվել Կոմիտեի նախագահին:*

*Կոմիտեի նախագահի կողմից հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների (մարզային վարչություններ և ՁՔԳՎ բաժիններ) այցելությունների ընթացքում անցկացված օպերատիվ խորհրդակցությունների ընթացքում Կոմիտեի նախագահի կողմից տրված հանձնարարականների հիման վրա Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել են Արմավիրի մարզային քննչական վարչությունում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 2024 թվականին քննված և այլ վարույթների միացված քրեական վարույթները, Արմավիրի, Արարատի և Տավուշի մարզային քննչական վարչություններում քննված քրեական վարույթներով 2024 թվականի ընթացքում դատարան ներկայացված՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունները դատարանի կողմից մասնակի բավարարելու, ինչպես նաև մերժելու դեպքերը և մերժման պատճառները, որոնց վերաբերյալ Կոմիտեի նախագահին ներկայացվել են զեկուցագրեր:*

*Ի կատարումն Կոմիտեի նախագահի 13.10.2025 թվականի հանձնարարության՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչությունում ուսումնասիրվել են Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների՝ մարզային վարչությունների վարույթում 01.10.2025թ. դրությամբ 3 տարի և ավել ժամկետում քննվող քրեական վարույթները՝ ստորաբաժանումների կողմից քրեական վարույթներով ուղարկված տեղեկանքների հիման վրա: Ուսումնասիրությունների ընթացքում ցուցաբերվել է մեթոդական օգնություն, որի կապակցությամբ զեկուցագիր է ներկայացվել Կոմիտեի նախագահին (լուծվել է 46 քրեական վարույթի ընթացքը):*

*Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է 2025 թվականի ապրիլ և հուլիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած ճանապարհատրանս-*

պորտային պատահարների, այդ թվում՝ մահվան ելքով դեպքերի վիճակագրությունը և տրամադրվել ՀՀ Ներքին գործերի նախարարությանը:

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ ուսումնասիրվել են 2024 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերով, ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ, 330-րդ և 507-րդ հոդվածներով քննված քրեական վարույթներով հանրային քրեական հետապնդում հարուցելու և մեղադրանք ներկայացնելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1 կետին հղում կատարելով հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու կամ հանրային քրեական հետապնդում չհարուցելու վիճակագրական տվյալները, որոնց վերաբերյալ կազմվել են տեղեկանքներ և ներկայացվել Կոմիտեի նախագահին:

Կոմիտեի նախագահի 2022թ սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 145-Լ հրամանի հիման վրա, Կոմիտեի նախագահի կողմից հսկողության վերցված թվով 373 փաստաթղթի կատարման ժամկետների պահպանման նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

Քննարկվել և պատասխաններ են տրվել այլ պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվամիջոցներից և ֆիզիկական անձանցից ստացված 229 տարաբնույթ գրությունների, հարցումների և դիմումների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2024 թվականի գործունեության տարեկան հաղորդման կազմման աշխատանքներում Կոմիտեի գործունեության ոլորտին վերաբերող խնդիրները ներառելու համար ամփոփվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից ստացված՝ ՀՀ քննչական կոմիտեի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հարցաշարում ներառված տեղեկատվությունը:

Ուսումնասիրվել և ամփոփվել են 2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Կոմիտեի ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով ներգրավված հոգեբանների կողմից քննչական, ինչպես նաև վարութային այլ գործողություններին մասնակցելու տվյալները:

Գլխավոր վարչության կողմից կազմակերպվել են 2024 թվականի տարեկան, 2025 թվականի առաջին կիսամյակի արդյունքների ամփոփմանը նվիրված Կոմիտեի կոլեգիայի նիստերի աշխատանքները:

Կոմիտեի նախագահի հատուկ հանձնարարությամբ՝ Գլխավոր վարչության կողմից կազմակերպվել է ՀՀ Վարչապետի հովանու ներքո անցկացվող «Բանակային խաղերին» Կոմիտեի մասնակցությունը ապահովելու գործընթացը, երրորդ տարին անընդմեջ Կոմիտեի թիմը գրավել է առաջին տեղը իրավապահ մարմինների ենթախմբում՝ արժանանալով ՀՀ Վարչապետի գավաթին:

*Վիճակագրություն, ուսումնասիրություններ, վերլուծություններ և ամփոփումներ.*

Գլխավոր վարչությունում յուրաքանչյուր ամիս ուսումնասիրվել և ամփոփվել են Կոմիտեի ստորաբաժանումների կողմից կատարված քննչական աշխատանքների վերաբերյալ ամսական, 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան և 2025 թվականի առաջին կիսամյակի վիճակագրական հաշվետվությունները:Կատարվել է հաշվետվություններում առկա տվյալների ամփոփում և համեմատական վերլուծություն՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ, ինչպես նաև Կոմիտեի ստորաբաժանումների արդյունքների միջև, մասնավորապես՝ հաշվետու ժամանակաշրջանում քրեական վարույթների ծանրաբեռնվածության, արտադրողականության և այլ ցուցանիշների վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման համաձայն՝ կատարվել է եռամսյակային ոչ ֆինանսական ցուցանիշների հավաքագրում, ամփոփում, որոնց արդյունքները ներկայացվել են Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, ամփոփվել և Կոմիտեի գլխավոր քարտուղարին են ներկայացվել ՀՀ կառավարության 05.12.2024թ. 1922-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025 թվականի ընթացքում որպես գույք արգելադրված դրամական միջոցները՝ ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու համար:

Կոմիտեի նախագահի 2018 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 169-Լ հրամանի 3-րդ կետի համաձայն՝ Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումներից ստացված տվյալների հիման վրա, ամսական կտրվածքով, Կոմիտեի նախագահին է ներկայացվել Կոմիտեի ստորաբաժանումների վարույթում քննված քրեական վարույթների նախաքննության ժամկետների վերաբերյալ տեղեկանքը:

Կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 180-Լ հանձնարարականի 3-րդ կետի համաձայն՝ ամփոփվել և Կոմիտեի նախագահին են ներկայացվել մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների քրեական վարույթների վերաբերյալ ամսական ցուցանիշները:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 24.03.2022թ. թիվ ՔՏՄ/01.2/4137-22 գրության՝ յուրաքանչյուր ամիս Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններից և ստորաբաժանումներից ստացված տվյալների հիման վրա ամփոփվել և ՀՀ տեսչական մարմնին են ներկայացվել Կոմիտեի վարույթում հրդեհների վերաբերյալ քննված վարույթների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, որի մեկ օրինակը տրամադրվել է նաև ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությանը:

ՀՀ վիճակագրական կոմիտեից ստացված թիվ ՎԿ/2-03/1544-2023 գրության համաձայն՝ յուրաքանչյուր եռամսյակ ներկայացվել է հարկային և մաքսային հանցա-

գործությունների վերաբերյալ իրականացվող նախաքննության մասին Ձև 1-ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ վիճակագրական աղյուսակը:

Կոմիտեի նախագահի 30.06.2023թ. թիվ 173-Լ հրամանի համաձայն՝ կատարվել են 2024 թվականի չորրորդ, 2025 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների արդյունքներով ներկայացրած ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքների արդյունքների վերաբերյալ գնահատման թերթիկների մշտադիտարկում և ուսումնասիրություն, որոնց վերլուծության կապակցությամբ կազմվել են զեկուցագրեր և ներկայացվել Կոմիտեի նախագահին:

Կոմիտեի նախագահի 2020 թվականի թիվ 149-Լ հանձնարարականի համաձայն՝ ուսումնասիրվել և վերլուծվել են Կոմիտեի ստորաբաժանումների վարույթում քննված քրեական վարույթներով 2024 թվականի 4-րդ, 2025 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում նշանակված փորձաքննությունների և ստացված եզրակացությունների վերաբերյալ տեղեկությունները, այդ կապակցությամբ կազմված ամփոփ տեղեկանքները ներկայացվել են Կոմիտեի նախագահին:

Կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 22-ի թիվ 110-Լ հանձնարարականի համաձայն՝ յուրաքանչյուր ամիս ուսումնասիրվել և վերլուծվել են Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներում ներգրավված փորձագետների կատարված աշխատանքների արդյունավետության վիճակը:

**Փորձագետների կողմից իրականացված գործունեության ուղղությամբ.**

2025 թվականի ընթացքում Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատանքներում ներգրավված փորձագետների կողմից մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել մասնագիտական աջակցություն ցուցաբերելու գործում: Այսպես.

Հաշվետու ժամանակահատվածում, զննություն կատարելու նպատակով, Գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության աշխատանքներում ներգրավված տնտեսագիտական և հաշվապահական փորձագետներին է տրամադրվել բազմադրվագ 9 քրեական վարույթ՝ 35 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց վերաբերյալ:

Կատարված փաստաթղթային զննությունների արդյունքում ուսումնասիրվել են բանկային և քարտային հաշիվների, ավանդային և վարկային հաշիվների, ինչպես նաև անհաշիվ գործարքների վերաբերյալ 1.065 ֆայլ:

Փաստաթղթերի զննման արդյունքում 28 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց մասով կազմվել է նախնական հետազոտման 25 արձանագրություն և տրամադրվել քննիչներին: Ընթացքում են ևս 6 կազմակերպությունների վերաբերյալ փաստաթղթերի զննման աշխատանքները:

Էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող ֆայլերի որոնման, հավաքագրման, ամրագրման և պահպանման նպատակով ներգրավված փորձագետ-

*ների կողմից 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Կոմիտեում քննվող քրեական վարույթների շրջանակներում կատարվել են էլեկտրոնային կրիչներում առկա ֆայլերի, այդ թվում՝ վարույթի մասնավոր մասնակիցների կողմից ներկայացված ձայնագրությունների զննման և վերծանման աշխատանքներ՝ ընդհանուր 74.363 ֆայլ, որոնց արդյունքում արձանագրվել է 6.482 էջ:*

*Հոգեբան փորձագետի կողմից 2025 թվականի ընթացքում Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության հետ մշակված ժամանակացույցի համաձայն, 179 հավակնորդի հետ իրականացվել են քանակական և որակական վերլուծության աշխատանքներ՝ Կոմիտեում քննիչի պաշտոնի հավակնող թեկնածուների համար մշակված հոգեբանական թեստերի կիրառմամբ: Թեկնածուներից յուրաքանչյուրի վերաբերյալ կազմվել է անհատական եզրակացություն և տրամադրվել Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությանը՝ մշակված ժամանակացույցին համապատասխան:*

***Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում*** *(այսուհետ՝ Գլխավոր վարչություն) ընդունվել է 719 հաղորդում, որից 282-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 437-ով՝ չի նախաձեռնվել:*

*Նշված ժամանակահատվածում քննվել է 1.818 քրեական վարույթ (2024թ.՝ 1.942), որից 640-ը փոխանցվել է 2024 թվականից:*

*169 քրեական վարույթ՝ 377 մեղադրյալի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 123 վարույթ՝ 301 անձ), 341 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 209), որից 333-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 201), իսկ 4-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 8), 610-ը՝ միացվել է (2024թ.՝ 720), 67 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 37), 324-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 213), 307 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 640):*

*Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 83.1%, (2024թ.՝ 67%), ըստ դատավարական ավարտների՝ 28.1% (2024թ.՝ 17.1%) :*

*1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 45 վարույթ (2024թ.՝ 46):*

*Ավարտված քրեական վարույթներով պատճառվել է 6.934.143.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 2.419.525.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 369.265.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

*Այսպես՝*

***Պետությանը*** *պատճառվել է 4.794.103.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 2.300.630.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 200.933.000 ՀՀ դրամ արժողության գույքի և 466.562.000 ՀՀ դրամ վրա:*

**Համայնքներին** պատճառվել է 866.770.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 4.500.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 140.750.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

**Իրավաբանական անձանց** պատճառվել է 340.991.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 10.863.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:

**Ֆիզիկական անձանց** պատճառվել է 932.279.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 103.532.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 27.572.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Անավարտ վարույթներով 2025 թվականի ընթացքում վերականգնվել է 2.061.805.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և չավարտված վարույթներով վերականգնվել է 4.481.330.000 ՀՀ դրամ (2024թ.՝ 1.481.276.000 ՀՀ դրամ, աճել է 3.000.054.000-ով կամ 202%-ով):

Գլխավոր վարչությունում մշտապես քննվել և քննվում են բազմադրվագ, առանձին բարդություն ներկայացնող, հասարակական հնչեղություն ունեցող քրեական վարույթներ:

**Կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության** (այսուհետ Գլխավոր վարչություն) կողմից ընդունվել է 267 հաղորդում, որից 236-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 31-ով՝ չի նախաձեռնվել:

Նշված ժամանակահատվածում քննվել է 668 քրեական վարույթ (2024թ.՝ 565), որից 157-ը փոխանցվել է 2024 թվականից:

181 քրեական վարույթ՝ 272 մեղադրյալի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 137 վարույթ՝ 216 անձ), 2 բժշկական հարկադրանքի վարույթով կազմվել է եզրափակիչ ակտ և ուղարկվել դատարան (2024թ.՝ 1): 68 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 34), որից 58-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 29), իսկ 10-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 5), 72-ը՝ միացվել է (2024թ.՝ 107), 64 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 16), 164-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 113), 117 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 157):

Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 82.5%, (2024թ.՝ 72.2%), ըստ դատավարական ավարտների՝ 28.1% (2024թ.՝ 17.1%) :

1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 45 վարույթ (2024թ.՝ 46):

Ավարտված քրեական վարույթներով պատճառվել է 5.515.437.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 61.123.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:

Այսպես՝

**Պետությանը** պատճառվել է 5.476.035.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 966.000 ՀՀ դրամը:

**Համայնքներին** պատճառվել է 39.402.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 60.157.000 ՀՀ դրամը (1 քրեական վարույթով կատարվել է ավել վերականգնում):

**Միջազգային կազմակերպություններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց** վնաս չի պատճառվել: Անավարտ վարույթներով վերականգնումներ չեն եղել:

**Կոմիտեի փնտրեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության** (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) կողմից ընդունվել է 1.139 հաղորդում, որից 957-ով քրեական վարույթ է նախաձեռնվել, իսկ 182-ով՝ չի նախաձեռնվել:

Նշված ժամանակահատվածում քննվել է 3.327 քրեական վարույթ (2024թ.՝ 2.585), որից 1.546-ը փոխանցվել է 2024 թվականից:

103 քրեական վարույթ՝ 150 մեղադրյալի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 73 վարույթ՝ 94 անձ), 128 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 240), որից 90-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 187), իսկ 38-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 53), 186-ը՝ միացվել է (2024թ.՝ 220), 499 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 113), 740-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 392), 1.671 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 1.546):

Արդյունավետությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 49.8%, (2024թ.՝ 40.2%), ըստ դատավարական ավարտների՝ 6.9% (2024թ.՝ 12.1%) :

1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 90 վարույթ (2024թ.՝ 76):

Ավարտված քրեական վարույթներով պետությանը պատճառվել է 9.848.449.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 7.013.184.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 652.368.000 ՀՀ դրամ արժողության գույքի և 10.393.383.000 ՀՀ դրամի վրա:

Անավարտ քրեական վարույթներով 2025 թվականի ընթացքում վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 28.149.288.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և անավարտ վարույթներով վերականգնվել է 35.162.472.000 ՀՀ դրամ (2024թ.՝ 27.816.732.000 ՀՀ դրամ, աճել է 7.345.740.000-ով կամ 26.4%-ով):

**Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության** (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) կողմից ընդունվել է 15 հաղորդում, որից 14-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 1-ով՝ չի նախաձեռնվել:

Նշված ժամանակահատվածում քննվել է 173 քրեական վարույթ (2024թ.՝ 39), որից 2-ը փոխանցվել է 2024 թվականից:

21 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 20), որից 20-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 15), իսկ 1-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 5), 11-ը՝ միացվել է (2024թ.՝ 0), 130 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 17) (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 11 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 3):

Արդյունավետությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 93.6%, (2024թ.՝ 94.9%), ըստ դատավարական ավարտների՝ 12.1% (2024թ.՝ 51.3%) :

1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 17 վարույթ (2024թ.՝ 7):

Ավարտված քրեական վարույթներով ֆիզիկական անձանց պատճառված 100.000 ՀՀ դրամը վերականգնվել է:

Ուսումնասիրվել է ՀՀ դատախազությունից, ինչպես նաև Կոմիտեի ստորաբաժանումներից ստացված 1.985 քրեական վարույթ, որոնք ուղարկվել են ըստ տարածքային ենթակայության կամ այլ վարույթների միացնելու և նախաքննությունը մեկ վարույթում շարունակելու համար, իսկ հիմքերի բացակայության դեպքում՝ տարածքային ստորաբաժանումներից ստացված վարույթները վերադարձվել են:

Ստացվել է առերևույթ հանցանք կատարելու մասին 1.158 հաղորդում, որոնք ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումներ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-179-րդ հոդվածներով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

Կոմիտեի նախագահին է ներկայացվել վարույթն իրականացնող մարմինների կողմից թույլ տրված և հայտնաբերված խախտումների կապակցությամբ Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում նախնական ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ 57 միջնորդություն, իսկ արդեն կատարված նախնական ուսումնասիրությունների եզրակացությունների կապակցությամբ Գլխավոր վարչությունում անցկացվել է 6 օպերատիվ խորհրդակցություն:

Ուսումնասիրվել և կարծիք է ներկայացվել Կոմիտեի նախագահի հրամանների, հանձնարարականների, ինչպես նաև մի շարք այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու 42 նախագծի վերաբերյալ:

Գլխավոր վարչությունում 2025 թվականի ընթացքում ստացվել և քննարկվել է 2.566 դիմում, որոնց մեծամասնությունը քննարկվել է Գլխավոր վարչությունում, իսկ միջնորդության փաստեր պարունակող դիմումները՝ քննությանը վերաբերելի մասով քննարկելու համար, ուղարկվել են համապատասխան տարածքային ստորաբաժանումներ: Մի շարք դիմումներով Գլխավոր վարչությունում կազմակերպվել են դիմումատուների անձնական ընդունելություններ կամ դրանց կազմակերպումը հանձնարարվել է տարածքային ստորաբաժանումների պետերին:

Գլխավոր վարչությունում քննարկվել և ընթացք է տրվել ՀՀ Վարչապետի աշխատակազմից, ՀՀ Ազգային ժողովից, ԱԱԾ-ից, փարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դատարաններից, հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից ստացված 2.114 հարցման և գրության:

2025 թվականի ընթացքում Գլխավոր վարչության ծառայողների կողմից ուսումնասիրվել է նախաքննության փուլում գտնվող 1.169 քրեական վարույթ, որի արդյունքում վարույթն իրականացնող մարմնին տրվել է 189 գրավոր մեթոդական հանձնարարություն, որից 105-ի պահանջները կատարվել են ամբողջությամբ և 61 քրեական վարույթի ընթացքը լուծվել է:

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ Գլխավոր վարչությունում հսկողություն է սահմանվել պետական կառավարման տարբեր ոլորտներում դրսևորված կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի առթիվ քննվող քրեական վարույթների ընթացքի նկատմամբ, որոնք պարբերաբար ուսումնասիրվել են և ծագած համակարգային խնդիրների կարգավորման համար ներկայացվել են առաջարկություններ:

Կոմիտեի նախագահի 31.10.2025թ. հանձնարարությամբ Գլխավոր վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է Երևան քաղաքի քննչական վարչության և ենթակա ստորաբաժանումների վարույթում (բացառությամբ՝ ԾՀՔ բաժնի) 30.09.2025թ. դրությամբ 3 տարի և ավել ժամկետում քննվող 234 քրեական վարույթ, որի ընթացքում ցուցաբերած հետևողականության և մեթոդական օգնության արդյունքում՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 15-ը լուծվել է 42 քրեական վարույթի ընթացքը, իսկ 3 քրեական վարույթով որոշում է կայացվել քրեական հետապնդում չհարուցելու մասին:

Գլխավոր վարչության ծառայողները, ընդգրկված լինելով Կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 28-ի թիվ 55-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կազմում, Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական 1-ին, 2-րդ և 3-րդ բաժիններում իրականացրել են քրեական վարույթների գույքագրում: Կատարված գույքագրման արդյունքներով՝ առերևույթ հանցանքի՝ մեղադրյալ դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման ժամկետը չկասեցնելու, արդյունքում ծանր հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունից ազատվելու վերաբերյալ թվով 5 հաղորդում է ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր վարչությունում Կոմիտեի նախագահի մի շարք հանձնարարականների շրջանակներում յուրաքանչյուր ամիս տարածքային ստորաբաժանումներից պահանջվել է ընթացիկ քրեական վարույթներով հարուցված քրեական հետապնդումների և կալանքի տակ գտնվող մեղադրյալների,

*համայնքների նախկին և գործող ղեկավարների, կոռուպցիոն բնույթի հանցանքների դեպքերի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ, 44-155-րդ, 166-րդ և 252-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներով տեղեկատվությունը և իրականացվել վերահսկողություն:*

*Բացի այդ, 2025 թվականի ընթացքում իրականացվող վերահսկողության շրջանակներում Գլխավոր վարչության ծառայողները վերաբերելի մասով կատարել են նաև 29.10.2018թ. 168-Լ, 01.06.2016թ., 30-Լ, 18.05.2023թ., 142-Լ, 01.12.2022թ. Ն/06/46679-22, 21.11.2022թ. Ն/06/44705-22, 13.12.2023թ. Ն/06/59120-2023, 17.02.2021թ. ն/06/4478-2021, 30.09.2022թ. Ն/06/36370-2022, 06.06.2024թ. Ն/06/28910-2024, 13.02.2025թ. Ն/06/1038/0-2025, 10.12.2024թ. Ն/06/67711-2024, 08.01.2025թ. Ն/06/844-2025, 13.03.2025թ. Ն/06/18261-2025, Ն/06/49637-2025թ. հանձնարարականների պահանջները:*

***Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչություններ.***

***Երևան քաղաքի քննչական վարչության և ստորաբաժանումների** կողմից ընդունվել է 32.545 հաղորդում, որից 23.105-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 9.440-ով՝ չի նախաձեռնվել:*

*Նշված ժամանակահատվածում քննվել է 39.937 քրեական վարույթ (2024թ.՝ 37.816), որից 10.679-ը փոխանցվել է 2024 թվականից:*

*5.118 քրեական վարույթ՝ 5.323 մեղադրյալի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 3.806 վարույթ՝ 4.065 անձ), 16 բժշկական հարկադրանքի վարույթով կազմվել է եզրափակիչ ակտ և ուղարկվել դատարան (2024թ.՝ 9): 8.498 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 6.974), որից 7.245-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 5.609), իսկ 1.253-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 1.365), 3.226-ը՝ միացվել է (2024թ.՝ 2.559), 1.983 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 3.496), 11.734-ը հաշվառվել է որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 10.292), 9.360 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 10.679):*

*Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 76.6%, (2024թ.՝ 71.8%), ըստ դատավարական ավարտների՝ 34.1% (2024թ.՝ 28.5%) :*

*1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 178 վարույթ (2024թ.՝ 182):*

*Ավարտված քրեական վարույթներով պատճառվել է 2.152.043.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 849.963.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 16.100.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

*Այսպես՝*

***Պետությանը** պատճառվել է 633.174.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 368.686.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:*

***Համայնքներին*** *պատճառվել է 28.194.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 13.953.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 16.100.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

***Իրավաբանական անձանց*** *պատճառվել է 65.224.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 25.567.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:*

***Ֆիզիկական անձանց*** *պատճառվել է 1.425.451.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 441.757.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:*

*Անավարտ վարույթներով 2025 թվականի ընթացքում վերականգնվել է 1.902.360.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և անավարտ վարույթներով վերականգնվել է 2.752.323.000 ՀՀ դրամ (2024թ.՝ 990.382.000 ՀՀ դրամ, աճել է 1.761.941.000-ով կամ 177%-ով):*

***Մարզային քննչական վարչությունների*** *կողմից ընդունվել է 35.541 հաղորդում, որից 28.974-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 6.567-ով՝ չի նախաձեռնվել:*

*Նշված ժամանակահատվածում քննվել է 41.215 քրեական վարույթ (2024թ.՝ 39.557), որից 7.557-ը փոխանցվել է 2024 թվականից:*

*8.079 քրեական վարույթ՝ 8.317 մեղադրյալի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 6.777 վարույթ՝ 7.114 անձ), 42 բժշկական հարկադրանքի վարույթով կազմվել է եզրափակիչ ակտ և ուղարկվել դատարան (2024թ.՝ 33): 14.995 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 15.848), որից 12.937-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 13.334), իսկ 2.058-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 2.514), 2.667-ը՝ միացվել է (2024թ.՝ 2.727),881 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 1.070), 6.162-ը հաշվառվել են որպես վարույթային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 5.543), 8.389 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026թ. (2025թ.՝ 7.557):*

*Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 79.6%, (2024թ.՝ 80.9%), ըստ դատավարական ավարտների՝ 56.1% (2024թ.՝ 57.3%) :*

*1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 185 վարույթ (2024թ.՝169):*

*Ավարտված քրեական վարույթներով պատճառվել է 2.872.830.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 2.038.667.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 31.320.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

*Այսպես՝*

***Պետությանը*** *պատճառվել է 1.226.412.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 745.378.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 22.080.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

***Համայնքներին*** *պատճառվել է 122.251.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 42.130.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:*

***Իրավաբանական անձանց*** *պատճառվել է 65.224.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 25.567.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:*

***Ֆիզիկական անձանց*** *պատճառվել է 724.340.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 455.857.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 9.240.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:*

*Անավարտ վարույթներով 2025 թվականի ընթացքում վերականգնվել է 549.435.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և անավարտ վարույթներով վերականգնվել է 2.588.102.000 ՀՀ դրամ (2024թ.՝ 1.202.094.000 ՀՀ դրամ, աճել է 1.386.008.000-ով կամ 115%-ով):*

***Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության*** *(այսուհետ՝ ԶՔԳՎ) կողմից ընդունվել է 4.639 հաղորդում, որից 4.078-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 561-ով՝ չի նախաձեռնվել:*

*Նշված ժամանակահատվածում քննվել է 8.921 քրեական վարույթ (2024թ.՝ 7.424), որից 1.523-ը փոխանցվել է 2024 թվականից:*

*993 քրեական վարույթ՝ 1.081 մեղադրյալի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2024թ.՝ 902 վարույթ՝ 995 անձ), 1 բժշկական հարկադրանքի վարույթով կազմվել է եզրափակիչ ակտ և ուղարկվել դատարան (2024թ.՝ 2): 2.987 քրեական վարույթ կարճվել է (2024թ.՝ 2.736), որից 1.776-ը՝ ռեաբիլիտացնող (2024թ.՝ 1.477), իսկ 1.211-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2024թ.՝ 1.259), 420-ը՝ միացվել է (2024թ.՝ 464), 1.848 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (2024թ.՝ 211), 1.320-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված (2024թ.՝ 1.582), 1.352 չհաշվառված վարույթ փոխանցվել է 2026 թվական (2025թ.՝ 1.523):*

*Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 84.8%, (2024թ.՝ 79.5%), ըստ դատավարական ավարտների՝ 44.6% (2024թ.՝ 49%) :*

*1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 107 վարույթ (2024թ.՝ 75):*

*Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից, ինչպես նաև վարժական հավաքներից խուսափելու դեպքերի առթիվ (ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ և 462-րդ հոդվածներ) քննվել է 3.276 քրեական վարույթ կամ ընդհանուր վարույթի 36.7%-ը, որից 564-ը փոխանցվել է 2024 թվականից:Նշված 3.276 քրեական վարույթից 201-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1.433-ի վարույթը կարճվել է, 1.017-ը հաշվառվել են որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված, 32-ն ուղարկվել է այլ մարմին, 17-ը միացվել է, 576-ը փոխանցվել է 2026 թվական:*

*Հարկ է արձանագրել նաև, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ և 462-րդ հոդվածներով նախաձեռնված քրեական վարույթներով, քննիչների և ստորաբաժանումների ղեկավարների կողմից բացատրական աշխա-*

փանքների արդյունքում, առերևույթ հանցանք կատարած 473 զորակոչիկ և զինապարտ ներկայացել են համապատասխան զինկոմիսարիատներ և հերթական զորակոչին մեկնել իրենց ծառայության վայր:

Բացի այդ, 2025 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվող 50 մեղադրյալներ ՀՀ պետբյուջե են վճարել ընդհանուր **566.500.000** ՀՀ դրամ և ազատվել են քրեական պատասխանատվությունից: Մեղադրյալներից 25-ը վճարել են 15.000.000-ական ՀՀ դրամ (ընդհանուր 375.000.000) և ազատվել են զինվորական ծառայությունից: 25 մեղադրյալ ընդհանուր վճարել է 191.500.000 ՀՀ դրամ և մեկնել ծառայության, որից 23-ը՝ վճարել են 8.000.000 ՀՀ դրամ (ընդհանուր 184.000.000) և մեկնել զինված ուժեր՝ 1 ամսյա ծառայության, 1-ը՝ 5.000.000 ՀՀ դրամ և մեկնել է 6 ամիս ժամկետով ծառայության, իսկ 1-ը՝ վճարել է 2.500.000 ՀՀ դրամ և մեկնել 1 տարի ժամկետով ծառայության (ընդհանուր առմամբ 2024-2025թ.թ. 115 մեղադրյալի կողմից ՀՀ պետբյուջե է վճարվել 1.492.500.000 ՀՀ դրամ):

Քննված 8.921 քրեական վարույթից 399-ը եղել է սպաների կողմից կատարված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ, որից 55-ը փոխանցվել է 2024 թվականից: Նշված 399 քրեական վարույթից 102-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 210-ի վարույթը կարճվել է, 4-ը հաշվառվել է որպես վարութային և ապացուցողական գործողությունները կատարված, 44-ն ուղարկվել է այլ մարմին, 11-ը միացվել է, 28-ը փոխանցվել է 2026 թվական:

Ավարտված քրեական վարույթներով պատճառվել է 216.949.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 113.531.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 7.887.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Այսպես՝

**Պետությանը** պատճառվել է 205.613.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 110.724.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 7.887.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

**Համայնքներին** վնաս չի պատճառվել:

**Իրավաբանական անձանց** պատճառվել է 3.825.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 671.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:

**Ֆիզիկական անձանց** պատճառվել է 7.511.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 2.136.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք առկա չէ:

Անավարտ վարույթներով 2025 թվականի ընթացքում վերականգնվել է 59.162.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և անավարտ վարույթներով վերականգնվել է 172.693.000 ՀՀ դրամ:

***Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում*** *2025 թվականի ընթացքում ստացված 241 միջնորդությամբ իրականացվել է 210 նախնական ուսումնասիրություն և 95 ստուգում:*

*Կատարված նախնական ուսումնասիրությունների համար առիթ է հանդիսացել Կոմիտեի ծառայողների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու համար ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ ՀՀ դատախազության տարբեր ստորաբաժանումներից ստացված 103 միջնորդությունը (2024թ՝ 220), այսինքն՝ նվազել է 117-ով կամ 53.1%-ով: Ստացված 103 միջնորդությունների առթիվ կատարվել է 83 նախնական ուսումնասիրություն, որից 2-ի արդյունքներով Կոմիտեի նախագահի միջնորդությամբ՝ կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել են կարգապահական վարույթներ և 2 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի, 7-ի արդյունքներով՝ 7 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի, 67-ի արդյունքներով՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, 1-ը՝ կասեցվել է, 6-ը՝ փոխանցվել 2026 թվական:*

*Լուծվել է նաև 2024 թվականից փոխանցված 12 նախնական ուսումնասիրության ընթացք, որոնցից 11-ի արդյունքներով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, 1-ի արդյունքներով 1 անձի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:*

***Կոմիտեի մարմիններից, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից ու փաստաբաններից ստացված*** *138 միջնորդությունների առթիվ իրականացված 127 նախնական ուսումնասիրություններից 11-ի արդյունքներով Կոմիտեի նախագահի միջնորդությամբ՝ կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել են կարգապահական վարույթներ, և 13 ծառայող ենթարկվել է տարբեր կարգապահական տույժերի, 21 դեպքում, նախնական ուսումնասիրության արդյունքներով, 23 անձի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, 72-ի արդյունքներով՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, 12-ը՝ կասեցվել է, 11-ը փոխանցվել է 2026 թվական:*

*Լուծվել է նաև 2024 թվականից փոխանցված 15 նախնական ուսումնասիրության ընթացք, որոնցից 11-ի արդյունքներով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, 4-ի արդյունքներով 10 անձի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:*

*Ընդհանուր առմամբ, 2024 թվականին սկսված և 2025 թվականին ավարտված նախնական ուսումնասիրությունների և կարգապահական վարույթների արդյունքներով Կոմիտեի նախագահի կողմից ինքնավար պաշտոն զբաղեցնող 55 անձանց նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 144-ի համեմատ:*

*Մասնավորապես՝*

*16-ի նկատմամբ «զգուշացում» (2024թ.՝ 30),*

*27-ի նկատմամբ «նկատողություն» (2024թ.՝ 58)*

*10-ի նկատմամբ «խիստ նկատողություն» (2024թ.՝ 51)*

*2-ի նկատմամբ «Դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» (2024թ.՝ 1):*

*Կոմիտեի նախագահի հրամանների և հանձնարարականների կատարման, ինչպես նաև Կոմիտեի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության ամրապնդման, որակյալ կադրերով համալրման նպատակով ներքին անվտանգության վարչության ծառայողների կողմից կատարվել են ստուգումներ, պարզաբանումներ, մշտադիտարկում, կատարվել են նաև Կոմիտեի տարբեր ստորաբաժանումներ անակնկալ այցեր՝ տեղում կարգապահական իրավիճակը գնահատելու համար:*

*Հաշվետու ժամանակաշրջանում ներքին անվտանգության վարչությունում իրականացված 5 (2024թ.՝ 3) նախնական ուսումնասիրությունների արդյունքում հավաքված փաստաթղթերը հանցագործության մասին հաղորդմամբ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, 3-ը՝ Կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն:*

*Ներքին անվտանգության վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք ակտիվորեն աջակցել են նաև Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատանքներին՝ կազմելով կարգապահական խախտման փաստի առկայության կամ բացակայության մասին հանձնաժողովի որոշումների նախագծեր, ինչպես նաև Կոմիտեի իրավաբանական վարչության քննիչների հետ մասնակցել են կարգապահական տույժերի դեմ վարչական դատարան բերված հայցերի քննությանը:*

***Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը** 2025 թվականի ընթացքում հարուցել է 16 կարգապահական վարույթ՝ 20 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ, որից 17-ի արարքում հաստատվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը և նրանց մեղավորությունը, իսկ 3-ի արարքում՝ կարգապահական խախտման բացակայությունը:*

***Կոմիտեի իրավաբանական վարչությունը** (այսուհետ՝ Վարչություն) մշակել է 17 իրավական ակտի նախագիծ, որից 4-ը՝ օրենքների, 13-ը՝ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր են:*

*«Զենքի շրջանառության կարգավորման մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Ոստիկանության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերն ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն՝ շրջանառելու համար, իսկ ՀՀ կառավարության որոշումների 13 նախագծերից 7-ն արդեն ընդունվել են:*

Մշակվել, շրջանառվել և Կոմիտեի նախագահի, նախագահի տեղակալների, գլխավոր քարտուղարի ստորագրմանն է ներկայացվել 158 իրավական ակտի նախագիծ, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ նախատեսող, գործողությունը դադարեցնող Կոմիտեի նախագահի թվով 49 իրավական ակտի նախագիծ:

Վարչությունում մշակվել և ներկայացվել է ստորագրման նաև Կոմիտեի գլխավոր քարտուղարի հրամանի 3 նախագիծ:

Հաշվետու ժամանակահատվածում այլ մարմիններից ստացված 226 իրավական ակտի նախագծի և այլ բնույթի 52 փաստաթղթի վերաբերյալ տրամադրվել է կարծիք:

Կազմակերպական բնույթի հարցերի վերաբերյալ նախապատրաստվել են գրություններ և Կոմիտեի իրավասությանը վերաբերող տեղեկատվություն է տրամադրվել 99 դեպքում:

Ներկայացնելով Կոմիտեի շահերը Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում՝ կազմվել և դատարան է ներկայացվել 1 հայցադիմում, 7 հայցադիմումի պատասխան, 5 դիրքորոշում և 4 միջնորդություն, 6 վերաքննիչ բողոք, 5 վերաքննիչ բողոքի պատասխան, 4 վճռաբեկ բողոք:26 դատական գործով ապահովվել է 54 ներկայացուցչություն և մասնակցություն դատական նիստերին: Առաջին անգամ Կոմիտեի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ որպես երրորդ անձ ներգրավվելու մասին, որը քննարկման փուլում է:

Վերը նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել 25 դատական գործով եզրափակիչ ակտի հրապարակում, որից 12-ը՝ Կոմիտեի օգտին:

Վարչությունում մշակվել և ներկայացվել են Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների ուսուցման ծրագրերը, ժամանակացույցերը, Կոմիտեի քննիչների վերապատրաստումների ծրագրերը և չափորոշիչները, ինչպես նաև շարունակական համագործակցություն է իրականացվել Արդարադատության ակադեմիայի հետ, այդ թվում՝ դասախոսական կազմի ընտրության, արդեն իսկ հաստատված ուսուցման ծրագրերը կոռուպցիայի կանխարգելման և հակազդման մեխանիզմներին վերաբերող նոր թեմաներով լրացնելու և այլ հարցերում:

Ապահովվել է մասնակցություն միջգերատեսչական տարբեր աշխատանքային խմբերում, ներկայացուցչություն է իրականացվել հասարակական կազմակեր-պությունների և այլ մարմինների, կազմակերպությունների կողմից կազմակերպված թվով 39 քննարկումների, դասընթացների և շնորհանդեսների:

Իրականացվել են Կոմիտեի նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարականներ:

**Կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի** կողմից 2025 թվականի ընթացքում քննարկվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 333 հարցում, որից 70-ը փոխանցվել է 2024 թվականից:

*333 հարցումից 106-ը կամ 31.8%-ը կատարվել է ամբողջ ծավալով, իսկ 227-ը փոխանցվել է 2026 թվական:*

*Քննարկվել է Կոմիտեի ստորաբաժանումներում իրականացվող քրեական վարույթներով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղղված 448* ***հարցում****, որից 292-****ը*** *կամ 65.1%-ը լրամշակվելուց և թարգմանությունն ապահովելուց հետո* ***փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն****՝ կատարման նպատակով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով, 82-ը կամ 18,3%-ը լրամշակման վերադարձվելուց հետո 2025 թվականի ընթացքում այլևս չի ստացվել 74 հարցում կամ 16,5%-ը գտնվում է թարգմանության փուլում:*

*Կոմիտեի ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով նախկինում ուղարկված հարցումներից՝ 2024 թվականին ուղարկված 353 հարցումից, ընթացիկ է 76-ը կամ 21.5%-ը, 2023 թվականին ուղարկված 247 հարցումից ընթացիկ է 17-ը կամ 6.8%-ը, 2014-2022թ.թ. ուղարկված հարցումներից ընթացիկ են 123-ը, որոնցով բաժնի կողմից պարբերաբար միջոցներ են ձեռնարկվում դրանց անհրաժեշտության առկայությունը կամ բացակայությունը պարզելու, օտարերկրյա իրավասու մարմիններին, դրանց կատարումն ապահովելու նպատակով, հիշեցումներ ուղարկելու և ընթացքը լուծելու ուղղությամբ:*

*Ավելին, միասնական աշխատելաոճ ձևավորելու նպատակով, բաժնի կողմից մշակվել և ներդրվել են օտարերկրյա իրավասու մարմիններին ուղղված իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցումների ուղեցույցներ և օրինակելի նմուշներ, որոնք հնարավորություն են ընձեռել նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց առավել սեղմ ժամկետներում ներկայացնել միջազգային իրավական համագործակցության պահանջներին համապատասխանող հարցումներ:*

*Կոմիտեի նախագահի, ոլորտը համակարգող տեղակալի և մի շարք օտարերկրյա պետությունների արտակարգ և լիազոր դեսպանների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետությունում տարբեր պետությունների դեսպանությունների իրավապահ ոլորտի գործընկերների հետ կազմակերպվել է 19 պաշտոնական հանդիպում: Բացի այդ, 2025 թվականի ընթացքում կազմակերպվել են* ***Կոմիտեի ղեկավարության 11 պաշտոնական այցեր*** *Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության* ***դեսպանություններ****:*

*Բաժնի կողմից կազմակերպվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հանրային անվտանգության նախարարության Հունան նահանգի հանրային անվտանգության դեպարտամենտի պետի տեղակալի գլխավորած*

պատվիրակության 2-օրյա այցը Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում պատվիրակությանն ընդունել է Կոմիտեի ղեկավարությունը:

Նույն ժամանակահատվածում իրականացվել է Կոմիտեի նախագահի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

Իրականացվել **են նաև** «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Միացյալ Նահանգների արդարադատության դեպարտամենտի Ալկոհոլի, ծխախոտի, հրազենի և պայթուցիկ նյութերի դեմ պայքարի բյուրոյի միջև փոխըմբռնման հուշագրի» **ստորագրմանն ուղղված աշխատանքներ, որը նախատեսվում է ստորագրել 2026 թվականի առաջին կիսամյակում:**

**Իրականացվել են** «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հանրային անվտանգության նախարարության միջև համագործակցության հուշագրի» **ստորագրմանն ուղղված աշխատանքներ,** որը նախատեսվում է ստորագրել 2026 թվականի 2-րդ կիսամյակում:

**Իրականացվել են** «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարը համակարգող բյուրոյի միջև» համագործակցության հուշագրի **ստորագրմանն ուղղված աշխատանքներ,** որը նախատեսվում է ստորագրել 2026 թվականի 2-րդ կիսամյակում:

Հաշվետու ժամանակահատվածում, մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները կատարելագործելու նպատակով, իրականացվել են 44 անձանց մասնակցությամբ 28 ծառայողական գործուղումների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ՝ դեպի օտարերկրյա պետություններ (Իսպանիայի Միացյալ Թագավորություն, Շվեյցարական Համադաշնություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Նիդերլանդների Թագավորություն, Հունգարիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Լեհաստանի Հանրապետություններ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Շվեդիայի Թագավորություն և այլ պետություններ):

2025 թվականի ընթացքում Կոմիտեում իրականացվող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ քրեական վարույթներով քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված 199 իրազեկումների (ծերքակալումներ) նախագծերը մինչև ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչություն ուղարկելը՝ համաձայնեցվել է Կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի պետի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Բաժնի կողմից 82 մասնակցություն է ապահովվել նաև միջգերատեսչական տարբեր աշխատանքային խմբերում, ներկայա-

ցուցչություն է իրականացվել հասարակական-կազմակերպությունների և այլ մարմինների, կազմակերպությունների կազմակերպած քննարկումներին:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժինը, Կոմիտեի նախագահի և ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ, ինչպես նաև Կոմիտեի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում իրականացրել է նաև այլ գործառույթներ:

***Անձնակազմի կառավարման վարչության*** կողմից 2025 թվականի ընթացքում նախապատրաստվել է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքացիական ծառայության և քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վերաբերող անհատական իրավական ակտերի, ինչպես նաև Վարչության գործառույթներից բխող այլ իրավական ակտերի նախագծեր՝ 3.847 անձի վերաբերյալ:

Կազմակերպվել է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման համար 2025 թվականին 5 քննություն, ընդունվել, ուսումնասիրվել, մշակվել և ստուգվել է 496 հայտատուի դիմում՝ այդ թվում 2025 թվականի հունվարին կայանալիք քննության, որի շրջանակներում նախապատրաստվել է 3.976 տեղեկանք, այլ կառույցներին ուղղված գրություններ, ինչպես նաև հայտատուների և նրանց մերձավոր ազգականների վերաբերյալ ձև 8 պահանջագրեր:

Իրականացվել է Արդարադատության ակադեմիայում ուսումնառություն անցնող 3 խումբ ունկնդիրների հետ կապված գործընթացներ (79 ունկնդիր):

Կազմակերպվել է Կոմիտեում 78 նոր նշանակված քննիչների նկատմամբ մասնագիտացման ղեկավար նշանակելու գործընթացը և ամփոփվել է 2024թվականի 2-րդ և 2025 թվականի 1-ին կիսամյակների ընթացքում կազմակերպված մասնագիտացման ղեկավարման գործընթացների ավարտման վերաբերյալ 50 եզրակացությունները:

Կազմակերպվել է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման (հերթական, լրացուցիչ, հատուկ ուսուցում) հետ կապված աշխատանքները՝ 354 անձի վերաբերյալ:

Իրականացվել է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հերթական և արտահերթ ատեստավորման, արտահերթ առաջխաղացման կազմակերպման աշխատանքները՝ 264 անձի վերաբերյալ:

Կազմակերպվել է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալու աշխատանքները՝ 356 անձի վերաբերյալ:

Իրականացվել են Կոմիտեի հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված ձևաթղթով ծանուցման աշխատանքները՝ 80 գրություն՝ 583 անձի վերաբերյալ:

Իրականացվել են Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց դասային աստիճանների շնորհման ժամկետների հաշվարկման, ըստ ամիսների ժամանակացույցի կազմման, վարման՝ 140 և Կոմիտեի նախագահին համապատասխան իրավական ակտի նախագծերի ներկայացման աշխատանքները՝ 126 անձանց վերաբերյալ:

Իրականացվել են աշխատակիցների անհատական քարտերի վարման աշխատանքները՝ 734 անձի վերաբերյալ:

Իրականացվել է աշխատակիցների նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի հաշվառման, գործողության ժամկետների նկատմամբ վերահսկողության աշխատանքները՝ 48 հրաման՝ 60 անձի վերաբերյալ:

2025 թվականի ընթացքում Կոմիտեում ինքնավար պաշտոնի է նշանակվել Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 134 թեկնածու, որից 45-ը Կոմիտեի նախկին ինքնավար պաշտոն զբաղեցրած անձինք են եղել:

Հաշվետու ժամանակահատվածում զբաղեցրած պաշտոնից ազատվել է 141 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, որից 140-ը՝ գրավոր դիմումի հիման վրա, 1-ը՝ մահվան դեպքում:

2026 թվականի հունվարի 01-ի դրությամբ թափուր է 201 հաստիք:

2026 թվականի հունվարի 01-ի դրությամբ կին ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք 162-ն են (19.9%):

Կազմակերպվել են Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների մրցույթներ՝ 52 թեստավորման և 43 հարցազրույց փուլեր, որոնց շրջանակներում ուսումնասիրվել են 530 դիմումատուների փաթեթներ և տրամադրվել եզրակացություններ:

Կազմակերպվել են Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման աշխատանքները՝ 29 անձի վերաբերյալ:

Իրականցվել են Կոմիտեում ինքնավար և քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հատուկ կարևորության, հույժ գաղտնի և գաղտնի տեղեկություններին առնչվելու 1-ին, 2-րդ և 3-րդ ձևի թույլտվություն ստանալու համար ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրության, խմբագրման, համադրման, ստուգման և հաստատման աշխատանքները՝ 169 անձի վերաբերյալ:

Իրականացվել են «ԱՐՄԵԴ» համակարգում Կոմիտեի սոցիալական փաթեթի շահառուների անհատական տվյալների գրանցման և համապատասխան փո-

փոխությունների կատարման (խմբագրման) աշխատանքները՝ 270 անձի վերաբերյալ:

2026 թվականի հունվարի 01-ի դրությամբ Կոմիտեի աջակցող ստորաբաժանումներում թափուր է 42 հաստիք:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի աջակցող ստորաբաժանումներում պաշտոնի նշանակվել է 66 անձ, ազատվել՝ 90-ը:

**Կոմիտեի քաղաքացիների ընդունելության կազմակերպման բաժնի** կողմից քննարկվող ժամանակահատվածում տրամադրվել է 268 էլեկտրոնային անցաքարտ, որից 47-ը՝ կորցնելու և վնասվելու հետևանքով: Բաժին է վերադարձվել 217 էլեկտրոնային անցաքարտ՝ Կոմիտեի աշխատակիցների աշխատանքից ազատման և այլ պատճառներով:

Ամենօրյա ռեժիմով կատարվել է մշտադիտարկում տեսախցիկների միջոցով, կատարվել են այցելություններ Կոմիտեի ստորաբաժանումներ՝ բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում համապատասխան աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Կազմակերպվել է Կոմիտեի կենտրոնական մարմնի մասնաշենքերի մուտք գործելու նպատակով 17.383 անձի այցելություն, որից 6.038-ը՝ այցելուների հաշվառման գրանցամատյաններով, ինչպես նաև 68 լրագրողի այցելություն, քաղաքացիների ներկայացրած դիմումների, հարցումների և այլ գրությունների ընդունման վերաբերյալ տրամադրվել է 213 ստացագիր:

Կազմակերպվել է 514 քաղաքացու ընդունելություն, տրվել են հուզող հարցերի, բարձրացված խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներ և խորհրդատվություն:

Էլեկտրոնային եղանակով ստացվել է 515 դիմում, միջնորդություն, հարցում և գրություն, որոնք ուղարկվել են Կոմիտեի փաստաթղթաշրջանառության բաժին:

Կոմիտեի պաշտոնական կայքում նշված հեռախոսահամարներին ստացված 7.755 հեռախոսազանգերով քաղաքացիներին տրվել են համապատասխան պարզաբանումներ և տեղեկատվություն: